Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
2209
1876

1999

215 №2

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՀԵՆՐԻԿՈՍԻ ԱՏԵՐՈՒԹԻՒՆ։

գիրք առաջին

—

Հայոց Ծխական Դպրոցների աշակերտների և աշակերտուհիների համար աշակեց ՊՕՂՈՍ ՔԱԹԱՆԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Համբ. Լինֆիանեանց եւ ընկ.

1876

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՓՈՓԻՐԻԿ ՀԵՆՐԻԿՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։

Գիրք առաջին

—

Հայոց Ծխական Դպրոցների աշակերտների և աշակերտուհիների համար մշակեց ՊՕՂՈՍ ՔԱԹԱՆԵԱՆՑ

1622.

1629

28137-62 գ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Համբ. Էնֆիաճեանց եւ ընկ.

1876

43911-Ա.Ռ.

Дозволено цензурою. Тифлисъ. 16 Декабря 1876 года.

2209-ա

Հ Ֆ 2213

1622

ՆՈՐԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Վրաստանի եւ Իմերէթի թեմի

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ

ՀՈԳԵՒՈՐ ԹԷՄԱԿԱՆ ԽԵՐԱՏԵԱՆՔ

ԳՐԱԳԱՐԱՆ

Տէր Ստեփանոս Տէր Ստեփանոսեանցին

և

ՆՈՐԻՆ ՄԵԾԱՊԱՏՈՒԹԵԱՆ

Նիկողայոս Տէր Յակոբեանցին

Ղուէր մշակողից։

ՀԷՆՐԻԿՈՍ ԷՅԹԷՆՖԷՅԼՍ

Ա.

ՄՕՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կոմուհի Ադելայիդայի հետ միասին անցեալ տասնեւութերորդ դարու սկզբում մի շքեղ պալատի մէջ բնակվում էր իւր ամուսին Կոմ Ֆրիդրիկոսը: Նոքա ունէին գեղեցիկ զաւակ Հէնրիկոս անունով, որին ամեն կերպով աշխատում էին նուիրել իւրեանց սէրը: Դեռ եւս մանուկ Հէնրիկոսի լեղուն չէր սովորել իւր հօր քաղցր անունը արտասանել, երբ Կոմը հարկադրեցաւ թողնել իւր տուն ու տեղը, իւր ամուսինն ու որդին, և երթալ պատերազմի դաշտը, ուր արիւնարբու թշնամիների ժողովը սպասում էր նորան: Պալատի մէջ միայնակ մնացին Կոմուհին և իւր որդի Հէնրիկոսը, որ կազմում էր իւր մօր սրտի միակ սփոփանքը իւր ամուսնոյ հեռանալուց յետոյ: Նա աչքի առաջ առնելով, թէ որչափ ուրախանալու էր Կոմը իւր որդոյն կրթուած

տեսածին պէս, վճռեց ձեռք զարկել իւր միակ որդւոյ կրթութեանը:

Մի երեկոյ, երբ Ադէլայիդան մանուկը գրկած, նստած էր իւր սենեակում, նորա մօտ կանգնած էր Հէնրիկոսի դայեակ Մարգարիտան և աշխատում էր պատճառել նորա սրտին ուրախութիւն իւր ժողոված գեղեցիկ ծաղիկներով: Մանուկը, մի թեթև ժպիտ յարուցանելով իւր քնքոյշ դէմքի վերայ, ձգեց իւր ձեռքը դէպի գեղեցիկ և անուշաբոյր ծաղիկները, իսկ կոմուհին աչքերը վեր առաքած նայում էր այսպիսի մանկական հրճուանաց պանչելութեան վերայ և ինքն ևս զուարճանում էր այս տեսարանով: Սակայն այս կեանքի մէջ մեծ նշանակութիւններ ունեցող բոպէական զմայլմունքը ընդհատուեցաւ, երբ սենեակի դուռը բացուելով յանկարծ ներս մտաւ կոմսի հետ ուղղորդուած ծառան, և, իբրև մի գուժաբեր, յայտնեց նորան յետագայ ցաւալի լուրը. թէ՝ կոմսը սաստիկ վերաւորուած է, և սրտով փափագում է տեսնել իւր մատաղ օրերի ընկերուհի կողակցին իւր մահուան վաղահաս բոպէներից առաջ, որք անակնկալ կերպով շուտով մօտենալու են նորան:

Կոմուհին գունաթափուելով հազիւ կարողացաւ բռնած պահել իւր ձեռքում մանուկը: Ծառան տեսնելով իւր տիրուհւոյ երկիւղը, ամեն կերպով աշխատում էր նորան յոյս տալ, ասելով թէ՝ կոմսը անշուշտ կ'առողջանայ և այնքան վտանգաւոր չեն կոմսի վերքերը. միայն պիտոյ է շտապել օգնութիւն հասուցանելու համար: Կոմսի ծառայի այս խօսքերից չէր կարողանում ոչինչ մխիթարութիւն գտնել, երբ մտածում էր որ իւր օգնութեանը կարօտում է իւր կեանքի քաջ առիւծ ամուսինը և եթէ ունի սէր և ցանկութիւն նորան կենդանի տեսնել, նորան վերջին անգամ իւր կուրծքին սեղմել, անշուշտ պիտի ուրքան կարելի է շտապէ հասնելու նորա մօտ:

Մի ուրիշ այլ հնարք չէր մնացել թշուառացած Ադէլայիդայի համար, եթէ ոչ միայն առանց ուշանալու պատրաստուել դէպի ճանապարհ....այո, դէպ 'ի ճանապարհ, որ նորա իւրաքանչիւր քայլափոխի մէջ ցանում էր նորա առաջև մացառ ու տատասկ: Նա փշաքաղվում էր մտաբերելով այն հանգամանքը, այն անտանելի դրութիւնը, որ թողնելու էր իւր մանուկը միայնակ դայեակի մօտ: Արտասուաց անձրևանման կաթիլներով նա լուանալով իւր սիրելի մանկան ճակատը և քաջալերելով ինքն իրան հազիւ կարողացաւ իւր հրաժարման ժամանակը արտասանել յետագայ բառերը.

—Ա՛խ, իմ ամենասիրելի Հէնրիկոս, երանի՛ քեզ, որ քո մանկական սուրբ հոգին չը գիտէ այս

արտասուքների նշանակութիւնը, որ ոլոր մոլոր առուներով վազեցնում է քո մայրը իւր սևաբաղդ աչքերից: Խե՛ղճ մանուկ. որքա՛ն անբաղդ ես դու, քանզի կորցնում ես հայրդ քո ծաղիկ հասակումդ, դու որբանում ես նորանից, որին դեռևս չես ճանաչում: Ո՜հ, քանի՛ ու քանի՛ դժուարութիւններ կաշկանդում են ինձ, և որքա՛ն վշտանում եմ ես քեզ միայնակ թողնելուս համար, սակայն ի՞նչ պէտք է անել. ես չեմ կարող քեզ իմ հետ վերցնել. այո՛, անկարելի է իմ համար քեզ ինձ հետ տանել, որովհետև իմ գնալու ճանապարհը շատ և շատ երկար է և վտանգաւոր այս գարնանային ժամանակը:

Սակայն այս ևս բաւականութիւն չը տուեց նորա նեղացած սրտին. նա ձգելով իւր հայեացքը դէպի իւր որդւոյ դայեակը, կցկտուր ձայնով ասաց.

—Մարգարիտայ, իմ հոգւոյս հատոր, քեզ հաւատարիմ ճանաչելով, ես քեզ հաւատում եմ յանձնել այն, որ բոլոր աշխարհի մէջ կազմում է իմ հոգւոյ և սրտի միակ սփոփանքը. ես տալիս եմ պահպանութեան նորան, որին չէ կարող փոխարինել հանուր տիեզերքը իւր համայն շքեղութիւնով: Խնդրում եմ, աղաչում եմ, պահպանիր իմ մանուկը և մի՛ թողնիր առանց հայեցողութեան այն ժամանակը ևս, երբ նա քնած կը լինի: Այն օրե-

ռում, երբ երկինքը բացած կ'ունենայ իւր պարզ ու կապոյտ ճակատը և մեղմիկ զեփիւռը հնչելիս կը լինի իւր ախորժելի առողջարար զովութիւնը, դուրս բե՛ր նորան ազատ օդի մէջ, ցոյց տո՛ւր նորան այն ծաղիկները և գեղեցիկ առարկաները, որք կարող են թափել նորա սրտի մէջ քաղցրիկ ուրախութիւն և հրճո՛ւանք: Երբէ՛ք նորա ձեռքը մի՛ ձգի՛ր վտանգաւոր իրեր: Նայի՛ր, որ իմ միակ հէնրիկոսը չ'ընկնի իւր մանկական օրօրոցից, և զգուշացի՛ր, որ չը դնի իւր բերանում մի որ և իցէ վնասակար բան: Ի սէր Աստուծոյ, իմ սիրելի Մարգարիտայ, մի՛ կորցնի՛ր դու քո համբերութիւնը և մի՛ բարկանայ, եթէ քեզ նեղութիւն կը պատճառեն իմ որդւոյ թոյլութիւնը և զանազան պիտոյքը: Դու եղի՛ր իմ հէնրիկոսի համար հանգուցիչ և պահապան հրեշտակ: Այն աղախինը, որին ես յանձնում եմ իմ բոլոր տան կառավարութիւնը, մի առ մի կը յայտնէ քո բոլոր արարմունքը, կը յայտնէ ինձ այն, թէ ի՞նչպէս դու կատարել ես իմ քեզ արած յանձնարարութիւնքը: Որպէս զի ես կարողանամ լինել հանդարտ և իմ հոգիս լինի խաղաղ, գոնէ խոստացի՛ր ինձ այն, որ չես մոռանայ կատարելու իմ առ՝ի սրտէ և հոգւոյ քեզ ուղղած այս աղերսս: Ա՛խ, դժուար է իմ համար անցուցանել ժամանակը. ես մինչև իմ դարձի օրը համարելու եմ բոլոր ժամերը

և բոպէները, որ անշուշտ իւրաքանչիւրը նոցանից իմ համար դժուար անցանող տարիներ կը դառնան: Եթէ միայն ինձ յաջողի կենդանի, ողջ և առողջ տեսնել իմ մանուկը, այն ժամանակ ես գիտեմ թէ ինչպէս կը վարձատրեմ քեզ: Ես ահա ասացի քեզ բոլորը, քաջ գիտեմ քո դովելի հաւատարմութիւնը. ուստի այսքանը բաւական համարելով, ընդունիր իմ խորին և անկեղծ շնորհակալութիւնը:

Այս ասելով կոմսուհին 'ի նշան գոհութեան մեկնեց իւր ձեռք դէպի իւր որդւոյ դայեակը:

Մարգարիտայի սիրտը շարժուած անբաղդ մօր ցաւակցական քաղցր զգացմունքներից, չ'աղատելով տիրուհւոյ ձեռքը իւր ձեռքից, 'ի նշան սերտ հաւատարմութեան, ասաց մի քանի մխիթարական խօսքեր և խոստացաւ անշուշտ ճշտապէս կատարել, բոլոր հրամանները և առաջարկութիւնները:

Ինչպէս յայտնի է սիրող և զգացմունքով հարուստ սրտերին այն հանգամանքը, որ մարդու սիրտը երբ խեղդուած է ցաւերով կամ սաստիկ ուրախութիւնով, նորա լեզուն դժուարանում է արտայայտել այնպէս, որպէս պիտոյ էր զգալ այն ցաւը ու կսկիծը, ուրախութիւնը ու բերկրանքը, որ կայ նորա սրտի մէջ դրոշմուած:

Այսպէս ևս Աղէքսանդրայի սիրտը տրտմութիւնով

լցուած լինելով, կապուեցին նորա լեզուի թելերը. նա չը կարողացաւ այլևս խօսել. տիրեց նորա սրտին խորին լռութիւն: Նա երկար աչքերը երկինք համբարձելուց յետոյ, մօտեցաւ Հէնրիկոսին, օրհնեց նորան և բարեմաղթեց երկար կեանք: Աղօթելուց յետոյ նա մանուկը տուեց Մարգարիտային, և չընայելով գիշերուան վերահաս լինելուն, ցրտին և անձրևին, նա իւր ծառաների առաջնորդութեամբ նստեց կառքը և ուղղեց իւր ճանապարհը դէպ իւր ամենասիրելի այրը:

Բ.

ՓՈՔՐԻԿ ԱՆԶԳՈՒՇՈՒԹԻՒՆԻՑ ՑԱՌԱՋԱՑԱԾ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՆԲԱՂԴՈՒԹԻՒՆԸ:

Մարգարիտան ինքը մի խեղճ, բայց խոհեմ և պարկեշտ գիւղական օրիորդ էր, սակայն նորա դէմքի գեղեցկութիւնը և ուրախացուցիչ վարք ու բարքը ձգտում էր դէպի ինքը ամեն մի զգայուն սիրտ, վառում էր անշէջ կրակ իւրաքանչիւր երիտասարդ տղամարդի սրտում: Նորան փափկասուն դայեակ ընտրեց կոմսուհին իւր փոքրիկ Հէնրիկոսի համար: Մատաղ օրիորդը բոլորովին մոռացութեան չը տալով կոմսուհւոյ հրաժարման ժամերում արտասանած վերջին խօսքերը, իսկապէս կատարում էր տիրուհւոյ

հրամանները: Նա ամեն կերպով գործէր գնում իւր աշխատանքը անպատճառ կատարել կոմսուհւոյ ցանկութիւնքը... այն բաղձանքը, որոյ առաջև գին չունէր ոչ մի ամենագեղեցիկ իր, վասն զի նա սիրում և պաշտում էր նորան իբրև իւր կեանքի միակ բարերարուհուն: Մի անգամ, Մարգարիտան նստած էր Հէնրիկոսի գեղեցիկ օրօրոցի մօտ, որոյ մէջ հանդարտ ու խաղաղ քնած էր մանուկը, և ժամանակ պարապ չանցուցանելու համար հիւսում էր մի գործուածք: Նորա օրօրոցը բուրում էր անուշահոտութիւնով, նորա օրօրոցի վերայ սփռել էր նա եղեմական այգիներից փունջ փնջած գեղեցիկ վարդեր ու ծաղիկներ, որ մանուկը արթնանալու ժամանակ հրճուէր և զուարճանար մեղմիկ ու ախորժելի ծաղկանց բուրմունքով: Ճանճերից անհանգիստ չը լինելու համար Հէնրիկոսի օրօրոցի վերայ ծածկել էր Մարգարիտան սպիտակ լաչակ (քօղ), որոյ հիւսուածքի ճեղքերից երևան էին լինում երեխայի վարդանման թշերը, որ վառվում էր իբրև արշալոյս, և փայլում էր իբրև պսպղուն արուսեակ:

Մինչդեռ այսպէս ուրախանում էր մանկան վերայ նայելով Մարգարիտան, յանկարծ ամրոցի դռների առաջև կանգ առաւ մի թափառող երաժիշտների խումբ, որ խնդրում էր թոյլատուութիւն հնչեցնելու երաժշտական գործիքների քաղցրահնչիկ

ձայները: Ծառաները այսպիսի բաւականութիւն ստանալու համար շատ և շատուրախացան, որ արժանացան այսպիսի մի ուրախ աւուր տանուտէրների հեռանալուց յետոյ, ազատութիւն ձեռք բերել յաջողուեցաւ նոցա ամրոցի անբաղդ բնակիչների բացակայութեան ժամանակը: Նոքա տան ներքին յարկում ընդունեցին երաժիշտներին և սկսեցին ուրախանալ և պարել անհոգապէս, խսպառ մոռանալով կոմսուհւոյ սարսափատու հրամանները: Մարգարիտան շատ սիրում էր երաժշտութիւն լսելը, բայց, մտաբերելով կոմսուհւոյ հրամանները, չը թողեց օրօրոցում քաղցր քնած մանկանը միայնակ. նա նայում էն նորա գեղեցիկ դէմքին, որոյ վերայ քունը իւր խաղաղ թևերը սփռելով, կարծես թէ զվարթեան հովանի էր բռնել նորա շուրջը: Այս իսկ միջոցին ներս մտնելով մանուկ անփորձ պարտիզպանը, ուրախութիւնով և կկմալով ասաց նորան:

—Մարգարիտայ, շուտով ցած արի, տես, մենք ուրախանում ենք այնպէս, որ դու մոքումդ և երևակայութեանդ մէջ անցուցած չես լինիլ: Ես իմ կեանքումս արժանի չեմ եղած լսելու այսպիսի գեղեցիկ և հրաշալի երաժշտութիւն: Դէ՛հ, շտապի՛ր, գնանք, գնանք շուտով: Մարգարիտան իւր տուած խոստմունքին հաստատ մնալու համար, անշարժ մնաց իւր տեղը նստած և մանուկ պարտիզպանին իւր սենեակից հեռացնելու համար, ասաց.

—Մի՞թէ դու չես լսել, որ ես կոմսուհւոյ հրամանով իրաւունք չ՚ունիմ ոչ մի բոպէ միայնակ թողնել օրօրոցը: Ես չեմ կարող ուխտաղանց լինել և դալ քո հետ ուրախութեան հանդիսում զուարճանալու նպատակով:

—Ախ, յիմար դու, բացագանչեց օդաչու երիտասարդը: Վերջ տուր այդ անմտութեանցդ, տեսնում ես մանուկը հանդիստ իւր համար քնած է. մի՞թէ դու նորան պիտի օդնես նորա քնած ժամանակը մի որև իցէ բանում: Ուրեմն վերկաց, գնանք. շատ մի՛ քնքշանար և մի՛ հարկադրիր քեզ երկար խնդրելու: Ես քեզ հաւատացնում եմ, որ դու մի քառորդ ժամից յետոյ անշուշտ կը վերադառնաս: Անկարելի է, ես քեզ չեմ թողնիլ այստեղ, դու անպատճառ պիտի յանձնառու լինիս ինձ հետ պարելու:

Ո՜հ, թշուառ ծակատագիր: Մարգարիտան մոռացաւ տիրուհւոյ աղաչանքները և իւր խոստմունքը, նա վերկացաւ և իջաւ ցած, բայց իբրև մի յանցաւոր, նա զգում էր իւր անուանկնդրութիւնը և թեթևամիտ լինելը: Այս խղճմտանաց ձայնի խայթոցը անհանգիստ էր առնում օրիորդին, և չէր թողնում նորան երկար ուրախութիւն վայելել: Նա կամենում էր վեր բարձրանալ, սակայն միւս ծառաները բռնելով նորա փափուկ ձեռքերից արգելում էին նորան:

Վերջապէս Մարգարիտան շատ աշխատելուց յետոյ կարողացաւ փախչել նոցանից դէպի բարձր և խոկոյն վազեց դէպի Հէնրիկոսի օրօրոցը:

Ո՜հ, տէր իմ Աստուած, կարո՞ղ եմ արդեօք ես պատմել ձեզ, ո՛վ իմ փոքրիկ սիրելի ընթերցող մանուկներ, թէ ո՛րքան սարսափ ընկաւ նորա վերայ, երբ նա տեսաւ դատարկ օրօրոցը առանց մանուկի, և փնտռտելով ամեն անկիւնները չը կարողացաւ գտնել նորան: Անզգոյշ թշուառ օրիորդը դարձեալ չը յուսահատուեցաւ, նա կարծում էր թէ ծառաներից մէկը, իբրև կատակ, ծածուկ վերցրել է մանուկը իւրեան վախացնելու համար:

Բայց այս մի մտածողութիւնը միայն մաշում և քերում էր նոցա սիրտը, թէ՝ կոմսուհւոյ ականջին կը հասնի անշուշտ այս անզգուշութեան լուրը: Ամեն ժամանակ այս միտքը սարսափ էր բերում նորա վերայ և հարկադրում էր նորան դողալ: Մարգարիտան մի քանի բոպէից յետոյ բոլորովին շփոթուած սկսեց վազել մի սենեակից դէպի միւսները մանուկը գտնելու նպատակով, սակայն 'ի զուր էր նորա այս բոլոր աշխատանքը, նա չը կարողացաւ գտնել նորան: Մահուան սարսափելի երկիւղը պատեց նորա սիրտը. նորա երեսը, նորա Աստուածեղէն լուսատու պատկերը ծածկուեց մահուան դեղնութեամբ: Նա շտապ քայլերով իջաւ ցած և բացագանչեց զարհուրելի տրտմութեամբ լցուած սրտով.

—Մանուկ կոմը անհետացրած է օրօրոցից: Մի գուցէ՞ ձեզանից մէկը պահել է նորան ինձ վախեցնելու նպատակով:

Ոչ ոք ցածի յարկից չէր դուրս եկել, և այս պատճառով բոլորն էլ դայեակին բացասական պատասխան էին տալիս: Այս միջոցին պարը յանկարծ ընդհատուեցաւ, և երաժիշտները շուտով հեռացան, չը սպասելով ոչինչ վարձատրութեան: Բոլոր ծառաները ներս թափեցին ամրոցը և սկսեցին որոնել մանուկը, բայց ինչպէս նոքա ճնացին քարացած, երբ նկատեցին որ բացի մանուկը, տարած էր այնտեղից շատ թանկագին իրեր: Արդէն այլ ոչինչ կասկածել չէր կարելի այն բանի վերայ, որ աւազակները մտել էին ամրոցը և կողոպտել բոլոր թանկագին իրերի հետ և կոմ Հէնրիկոսը, այո՛, այն անմեղ մանուկը, որով հրճվում էր նորա տրտմազգեաց մայրը: Հասարակաց ուրախութիւնը փոխուեց արտասուքի և կոծի, սակայն բոլորը ի զուր էր, քանզի Աստուած պատժեց նոցա իւրեանց անզգուշութեան համար:

Մարգարիտան կեանքաղրաւ զգացմունքով ձեռք ձեռքի զարկելով, աղաղակեց.

—Ո՛հ, Ամենաբարի Աստուած, օրհնուած է քո դատաստանը, ի՞նչպէս կարող է համբերել մեր կոմուհին, երբ նորա ականջին հասնի այս սրտասարսուռ համբաւը: Նա ոչինչ մխիթարութիւն մի

տեղից չը գտնելով, ցաւից և հառաչանքներից ոսկոռումորթ դարձած կը զրկուի կեանքից:

Մարգարիտան բոլորովին յուսահատութեան մէջ էր, նորա աչքերից արտասուքը թափվում էր այնպէս, ինչպէս երկինքը թուխ ու մութ ամպերով ծածկուած ժամանակը թափում է պարզ անձրևի անհամար կաթիլները երկրի կոշտ մակերևոյթի վերայ: Նա բոլորովին ճնաց շուարուած, նորա ալ-վարդակարմիր թշերը կորցրին իւրեանց նախկին գրաւիչ գեղեցկութիւնը: Նա ապուշ էր ճնացել, յառաջ վազեց այն նպատակով, որ ընկնի ջուրը և խեղդուի, բայց նորան ուժով կարողացան բռնել:

—Ո՛վ, Սաեղծողդ իմ, ասաց նա կցկտուր և աղիողորմ ձայնով. ո՞վ կարող էր իւր մտքով անցուցանել, թէ՝ այսպիսի մի աննշան և փոքրիկ անզգուշութիւնը կարող էր ահա այսպիսի կործանիչ հետևանք ունենալ, կարող էր այսչափ անբաղդութեան և ցաւի պատճառ լինել:

Գ.

ՄԱՑՐԱԿԱՆ ԿՍԿԻՆ

Այն րոպէին, երբ ամրոցի պահապան ծառան ահ ու դողի մէջ բոլորովին թաղուած, զանազան

մտածողութեանց անձնատուր եղած արձանի նման կանգնել էր մանկան սենեակումը, յանկարծ անակնկալ կերպով դուռը բացուեցաւ և ներս մտաւ Կոմսուհին:

Նորա ամուսնոյ վերքը այնքան վտանգաւոր չէր եղել և Կոմսը սկսել էր ապակաւ առ ապակաւ առողջանալ: Ադէլայիդայի սիրտը մայրական խնամակալութեամբ լեցը լենելով, փափագով կարօտում էր իւր սիրելի որդւոյ տեսութեանը: Այս իրողութիւնը տեսնելով և զգալով իւր մէջ Կոմսը, խնդրեց Ադէլայիդային ուղղևորուիլ դէպի տուն և ուրքան կարելի է լաւ պահպանել մանուկը: Հազիւ թէ կառքը կարողացաւ մօտենալ և կանգառնել ամրոցի դռների մօտ, Կոմսուհին սրտանց դուրս վազեց կառքից և դիմեց անընդմիջապէս դէպի մանկան սենեակը, ուր յոյս ունէր սիրով գրկելու իւր ամենասիրելի Հէնրիկոսը:

Բոլոր ներկայ գտնուողների վերայ ընկաւ մի սարսափ. ամենքը մնացին քարացած, երբ տեսան մանկան մօրը այսպիսի անմխիթար բոպէում: Ցուսահատութեան ովկիանոսի մէջ ընկղմուած մինչև կոկորդը Մարգարիտան տխուր ու տրտում ձայնով բացագանչեց:

—Տէր Աստուած, խղճա՛ սորան և ինձ: Դո՛ւ, ով մխիթարիչ Սուրբ Հոգի, սփոփիր այս հիգացեալ մօր սիրտը, տո՛ւր սորան համբերութիւն տանելու այս անտանելի տառապանքը,

Կոմսուհին տեսնելով դատարկ օրօրոցը, Մարգարիտայի տխուր երեսը և յուսահատութիւնը և նորա ահ ու դողը, թոյլացաւ: Կարծես այն բոպէին մահուան անգութ ձեռքերը յափշտակեցին նորան: Բոլորի լեզուն էլ լռութեան դերեր էին կատարում. ո՛չ ոք չէր համարձակվում պատասխանել Կոմսուհւոյ բազմաթիւ հարցերին:

Նորա մտքի մէջ պտոյտ առնող սարսափելի մտածողութիւնքը և խառն 'ի խուռն գուշակութիւնքը խոցոտում և գ'շատում էին նորա սիրտը: Սակայն 'ի զուր չէին նորա տարակուսանքը և բազմակողմանի հայեացքները, նա կարողացաւ ճշդապէս հասկանալ այս պատահմունքի բոլոր հանգամանքները և իսկական էութիւնքը, լսելով Մարգարիտայի բերանից հնչուած մի քանի աղճատեալ և կցկտուր բառերը: Կարծես երկինքը և երկիրը իրար գլխու դիպան, կարծես թէ նոքա պատրաստվում էին փլատակելու և իջեցնելու խորին անդունդը անբաղդ Կոմսուհւոյն: Նորա մեծ մեծ աչքերը, որ երկնակամարում վառ փայլող մի զոյգ աստղի նման լուսաւոր էին, մթութեան մէջ ընկղմեցան: Նորա զուարթ մարմինը մի բոպէումը թալկացաւ, բոլոր մարմնի վերայ պատեց մահուան սառն քրտինքը... Նա ու-

շաթափուելով ընկաւ իւր ծառաների լանջաց վերայ... Նորա խարտեաշ գեղեցիկ մազերը սփռուելով գետնի վերայ, կարծես կեանք ու գեղեցկութիւն էր պարգևում երկրի մակերևոյթին:

—Ո՜հ, Ողորմած Արարիչ իմ, բացագանչեց ուշքի գալով անբաղդ մայրը, որպէս թշուառ է իմ կեանքը, որքան թոյնաւոր է իմ ճակատագրական վերջին մահուան բաժակը: Ի՜նչ սարսափելի փորձութիւններ ես տալիս դու ինձ, որոց ես շատ տկար եմ տանելու: Ո՜հ, իմ սիրելի կեանքիս արև որդեակ, իմ կեանքիս միակ յոյս, Հէնրիկոս: Իսկ երբ դու լսես այս անմխիթար գոյժը, իմ աղնիւ կոմս, սա թշնամու թրից աւելի կը խոցոտէ և կը վերաւորէ քո սիրտը: Ա՜խ, իմն Հէնրիկոս... դու անբաղդ զաւակս, ո՞ւր ես դու այժմ: Ո՞ր անգութների ձեռքով յափշտակուեցար, և ո՞ր անխիղճն է արդեօք, որ քեզ կապոտած ու ծածուկ տեղումէ պահում: Տէր Աստուած իմ, ո՞րպի՞սի սարսուռ պատումէ իմ վերայ, երբ մտածումեմ, որ նորան փախցրին աւազակները... վա՜յ ինձ... նա պէտք է մեծանայ և ապրի նոցա մէջ առանց ոչ մի կրթութեան. նա, չը նայելով իւր զարմի ազնուութեանը, կոպիտ մարդոց հետ պիտի խառնուի և մեղքի մէջ անցուցանէ իւր կեանքի շրջանը: Այս ի՜նչ սարսափելի միտք է, որոյ մէջ ահա ոտքից ց՝գլուխ ընկղմուած եմ: Իմ որդի

Հէնրիկոս, այս դրութիւնը իմ համար անտանելի է և անմխիթար, ես աւելի երջանիկ կը լինեմ, եթէ այժմ դու լինես այստեղումս և մեռած: Ես պատրաստ եմ ուրախութեամբ փակելու քո սևորակ աչքերը և իմ աչաց արտասուքով լուանալու քո դագաղ թելերը, քան թէ քեզ աւազակ դարձած տեսնել. վասն զի դու քո անմեղ հասակի մէջ մահ ստանալով, անշուշտ պիտի փարէիր մեր երկնաւոր հօր գիրկը:

Ես դժուարանում եմ վճռել իմ մէջ, թէ արդեօք ո՞րպիսի շաւղով պիտի ընթանայ քո կեանքը, երբ դու հարկադրուած ես քո մանուշակ, նորաբաց վարդ հասակից սկսած մեծանալ անխիղճ և պղտորարիւն մարդոց մէջ, այնպիսի անպիտան հասարակութեան շրջանում, ո՞ւր երբէք չէն տալիս մեր բարերար Տիրոջ Աստուծոյ անունը. այնտեղ, ո՞ւր դին չունէ բարեգործութիւն ասած անունը:

Յետոյ կցկտուր ձայնով ծունկ խոնարհած կոմսուհին արտասանեց յետագայ խօսքերը.

—Իմ անբաղդութիւնների միակ սփոփիչ Ամենակարող Տէր, Հէնրիկոսին թէև անօրէն մարդիկը զրկեցին ինձանից, խլեցին նորան իւր մոր խանդակաթ ծոցից, իմ մայրական գրկից, սակայն նոքա քո նախախնամութիւնից չեն կարող զրկել: Իմ միտքը և աչքերը կարծատես են, ես չը գիտեմ ո՞ր

28137-62
(16222.)

մութ անտառներում կամ սարսափ տուող քարայրներում տարան ու ձգեցին անխնամակալութեան մէջ իմ աչքիս լոյս մանուկը: Սակայն Դու Ամենուրեք ես, քո աչքերից ոչինչ բան չէն թագկենալ, քանզի Դու տեսնում ես ամենայն ինչ:

Այժմ ես տկար եմ, իմ ձեռքից ոչինչ օգնութիւն չէ կարող սպասել Հէնրիկոսը, իսկ դու, ով Տէր, կարող ես պահել և պահպանել նորան քո զթառատ հովանաւորութեան տակ: Քո ողորմութեանը չափ ու սահման դնել բոլորովին անկարելի է: Դու լսում ես թռչունների ձայները, 'ի հարկէ և քո ականջին կը հասնեն անշուշտ այն իմ անմեղ մանուկի ձայնը, որ այժմ իւր հայրենական տունը և մօր փափկիկ գիրկը կորուսած, հովուի հովանաւորութիւնից զրկուած գառնուկի նման հեկեկում է հեռու գտնուած իմ աչքերից, բայց մօտիկ իմ սրտից: Իմ միակ յոյսս դու ես, ես սպասում եմ միայն քո ողորմութեանը, չը նայելով որ տրտմութիւնից իմ այս սիրտը լցվում է արեան հեղեղներով: Ուրեմն, Տէր իմ, տուր ինձ և Կոմին այնքան ոյժ և զօրութիւն, որ կարողանանք այս ահաւոր ու սարսափելի փորձութիւնը համբերութեամբ և առաքինութեամբ տանել:

Անբաղդ մայրը ահա այսպէս կամենում էր մխիթարութիւն գտնել երկար արտասուք թափելուց յետոյ:

Սակայն յուսահատութիւնը տիրել էր Մարգարիտային: Նա ընկնելով Կոմուհլոյ ոտքերի առաջև արտասվում էր և խնդրում էր ներողութիւն այսպիսի մի ամենամեծ անզգուշութեան համար:

—Ես պատրաստ եմ զոհել իմ անձը, միայն թէ կարողանամ ազատել Հէնրիկոսի կեանքը թշնամի մարդոց ձեռքից, աղաղողում և հաստատամիտ ձայնով ասում էր նա:

—Հանգստացիր. վեհանձնաբար պատասխանեց Կոմուհին: Ես ներում եմ քեզ, որովհետև արտասուքը միմիայն ապաշխարութիւն են արտայայտում. ես երբէք քեզ չար հատուցանել չեմ կամենում: Ուրեմն տեսնում ես, որ ես 'ի զուր չ'էի հրամայում քեզ չը թողնել միայնակ մանուկը: Դու զգում ես որքան անբաղդութիւնների պատճառ է լինում անուշնկդրութիւնը, թեթևամտութիւնը, և բաւականութիւններին ու շռայլ ուրախութիւններին անհոգ ապէս գլխովին հետևելը և անձնատուր լինելը:

Երբ Կոմուհին մի փոքր հանգստացաւ և սրտի հառաչանքները թեթևացան, նորան յայտնեցին, որ երկու ժամ չը կայ անցած այն բոպէից, որ մանուկը փախցրել են: Նորան որոնելու համար նա ուղարկեց բազմաթիւ քաջ տղամարդիկ. սակայն 'ի զուր անցաւ այս ամեն ջանքը, ամենքն էլ վերադարձան

միայնակ մէկը միւսի քամակից, առանց փոքրիկ Կոմս Հէնրիկոսի:

Մարգարիտայի աչքերից արտասուքը երբէք ցամաքում չէին, այլ միտահոս առուի նման թափվում էին միշտ թաց աղի կաթիլներ: Նա օրէ օր սաստիկ դունատվում էր: Նորա վառուող կարմրագոյն թշերը մահուան դեղնութիւնով փոխարինուեց, նա դարձաւ իբրև մի ուրուական: Իւրաքանչիւր մարդ խղճում և ցաւում էր տեսնելով մատաղ, հալ ու մաշ եղած օրիորդը: Չ'անցաւ շատ ժամանակ, յանկարծ Մարգարիտան բոլորովին անհետացաւ: Աշխարհի կենցաղավարութիւնը նորան բոլորովին զզուացրել էր. նորա համար կեանք վարելը այլ ոչինչ դին չունէր: Նա գնաց, նա անհետացաւ... ոչ ոք չը հասկացաւ նորա հեռանալու տեղը... ոչ ոք չ'իմացաւ նորա երթը:

Դ.

ԱՒԱԶԱԿՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Փոքրիկ Կոմս Հէնրիկոսին օրօրոցի միջից յաւիտենական մի անգութ և անխղճմտանք կախարդ կին էր: Նա դռնէ դուռն և փողոցէ փողոց գրբաց անունով թափառում էր և խաբում էր անփորձ մարդոց իւր հեզ հայեցուածքով, նա շատ անգամ յաջողութիւն էր գտնում նոյնպէս լինել զանազան տներում, խաբում էր կանացի թուլութեանցը, և յարմար միջոցում գողանում էր բոլոր իւր ձեռքը ընկած բաները: Կամենալով ամրոցի միջն ինչ լինելուն ծանօթ լինել, այս անզգամը շատ անգամ մտած էր Կոմսուհւոյ մօտ: Սակայն այս վերջին անգամ լաւ միջոց գտնելով Կոմսուհւոյ բացակայութիւնը, նա որ դաշնադրուել էր երաժիշտների հետ, որ մինչև նոքա ուրախութիւն և զուարճութիւն էին պատճառում ամրոցի պահապան ծառաներին և աղախիններին իւրեանց երաժշտական ներդաշնակ ձայներով, նա կարողացաւ հիմի դռնէ մտնել Կոմսուհւոյ սենեակը և օրօրոցից գողանալ մանուկը և սենեակում գտնուած թանկագին իրերը, և փախչել անյայտաղ:

Կախարդ կինը ուղղեց իւր ճանապարհը շտապ քայլերով դէպ 'ի անտառը և նստեց նա մարդկերանց աչքերից ծածկուելու համար խիստ թփերի մէջ մինչև կէս գիշեր: Ցեռոյ հաղիւ երևան լինող ճանապարհով սկսեց վաղէվաղ շարունակել իւր ճանապարհը: Այսպիսի անմարդաբնակ տեղերով ճանապարհորդում էր անօրէն պառաւը, նա ցերեկները նստում էր սովորաբար խիտ խիտ թփերի տակ, իսկ գիշերները շարունակում էր իւր գնացքը: Նա ոչինչ

պակասութիւն չ'ունէր, նրա բոլոր կերակուրները պատրաստ էին այն մախաղի մէջ, որ իւր ուսերովը ձգած տանում էր: Կախարդ կնոջ ճանապարհորդութիւնը տևեց մի քանի օր այս եղանակով: Վերջապէս նորա առաջև բացուեցաւ մի մեծ խորութիւն, որոյ մէջ ներս մտնելով մանուկ Հէնրիկոսի հետ, պատահեց նորան մի թփերով ծածկուած երկաթեայ դուռն, որ տանում էր դէպի մի քարայր: Պառաւը առանց ուշանալու բացեց դուռը, և այն մութ ու նեղ ճանապարհով սկսեց կամաց կամաց մտնել այն մեծ ու ահագին քարայրը, որ աւազակաց ընկերութեան ընակարանն էր համարվում: Աւազակները գողանալով զանազան գանձեր, շքեղ հագուստներ, ոսկիներ և թանկագին ակունք, բերում էին և պահում էին այնտեղ, իրանք ևս պահ մտնելով այս դժուարամուտ տեղում, ազատվում էին օրէնքի խիստ պատիժներից և տերութենական հալածանքներից:

Սեղանի նստած ճաշում էին, երբ կախարդ կինը մտաւ նոցա մօտ: Իրաւ ահալի տեսարան էին կատաղաբար պատկերացնում այն տեղ նստած մարդիկը: Նոցա երեսի վերայ փայլում էր չարութեան կնիքը, նոցա երկար միրուքները սարսափ էին ձգում մանուկ Հէնրիկոսի վերայ: Աւազակները տեսնելով մանուկը, շատ անչափ ուրախացան, որովհետև նոքա վաղուց կամենում էին իւրեանց ձեռքը ձգել մի

նշանաւոր տոհմի մանուկ: Անմիջապէս սկսեցին գովել կախարդ կնոջ քաջութիւնը և բաժակները զանազահարելով սկսեցին միաբերան «կեցցէ» ձայն տալ պառաւին և խմել նորա թոյնաւոր կեանքի բարեմաղթութեան բաժակը:

Աւազակապետը ոգևորուելով պառաւի այս պիսի քաջագործութեան վերայ, ոտքի կանգնեց և բացագանչեց.

—Սիրելի մայր, դու շատ լաւ յառաջացրիր այս գործը, վասն զի փոքրիկ Հէնրիկոսի կեանքով մենք ամեն տեսակ փորձութիւններից և հոգսերից ազատ կարող ենք լինել: Եթէ մեզանից մէկին մի անբաղդութիւն պատահի, Հէնրիկոսի կեանքը կը լինի նորա ազատութեան գին: Ուրեմն դու որքան քաջաբար կարող ես, աշխատիր լաւ պահպանել սորան, հոգս քաշիր սորա կեանքի և առողջութեան համար. և իբրև մեր տան միակ կառավարիչ և տէր, այս մանուկը պիտի մնայ քո մայրական հոգաբարձութեան ներքոյ:

«Խեղճ մայր»:

Անցան այս անբաղդ օրից երեքտարի և կէս, փոքրիկ Հէնրիկոսը աւազակների խմբով շրջապատուած մեծանում էր այս սարսափելի քարայրի մէջ: Խեղճ մանուկը այստեղում նոր սկսել էր խօսել, նա սովորում էր արտասանել իւր թոթովախօս լեզուով

մի քանի բառ և փոքր առ փոքր սկսուել էր բացուել նորա մտաց աչքը: Նորա յիշողութիւնից բոլորովին կորել էին և իւր ծնողական տունը և Աստուծոյ լոյս աշխարհը, որովհետև այս ահալի քարայրի մէջ արեգակի ճառագայթները երբէք չէին կարողանում թափանցել...միայն նորա ծուռն ու մուռ քարէ պատերը լուսաւորվում էր առաստաղից կախուած լապտերի կարմրագոյն աղօտ լուսով, որ գիշեր ու ցերեկ անդադար վառվում էր իբրև մի նսեմ ստուէր: Աւաղակները իւրեանց կեանքը բոլորովին ապահովացրել էին, նոցա տանը բոլոր կերակուրները և հացը պատրաստ էին, որովհետև նոքա արդէն վաղուց հոգացել էին ձեռք բերել իւրեանց ուտէստների պաշարը: Մոլութեան և անգործունէութեան առարկայ գինին անպակաս էր նոցա բնակարանից. զգուշութիւնով պահպանում և գործ էին ածում նոքա ամենայն ինչ, մանաւանդ ջուրը, որովհետև աղբիւրը նոցա բնակարանից բաւական հեռու էր:

Նոցա մահիճները շատ ճոխ էին, նոքա պատած էին փափուկ և թանկագին գորգերով և ոսկեհուռ կերպասներով:

Կախարդուհին ամեն կերպով աշխատում էր, որ Հէնրիկոսը ոչինչ բանում պակասութիւն չունենայ. նորա հոգսը միայն մանկան ուտելիքի և խմելիքի մէջ էր կայանում, իսկ նորա կրթութեան համար երբէք չէր մտածում: Խեղճ Հէնրիկոսը, ո՞վ սիրելի ընթերցող մանուկներ, ահա ինչ ողորմելի դրութեան մէջ էր, նա չը գիտէր ո՛չ կարդալ և ոչ գրել... և երբէք նորա ականջին չէր հասնում Ստեղծող Արարչի Սուրբ անունը այս անգութ աւազակաց մեղաւորութեան ծով քարայրի մէջ:

Նոքա ոչ մէկը չէին կարողանում դէպ իւրեանց դրաւել մանկան ուշադրութիւնը. միայն աւաղակներից մէկը, Ռիչարդ անունով, շատ սիրում էր մանուկ Կոմին և աշխատում էր ամենայն կերպով բարեհաճել նորա կեանքը: Սա ինքը դեռ ևս բաւական երիտասարդ էր և ազնիւ ընտանեաց զաւակ... բայց խաղերին շատ անձնատուր լինելը, ձգել էր շատերի մէջ կասկած սորա աւաղակ լինելուն:

Ռիչարդը վառուած Կոմ մանկան սիրով, միշտ հնարքներ էր մտածում և գործ դնում նորան ուրախութիւն պատճառելու համար: Նա ամեն ժամանակ դառնալով դէպի քարայրը, բերում էր իւր հետ այնպիսի մանկական խաղալիքներ, որով կարող էր զուարճութիւն գտնել փոքրիկ ազնուազարմ Կոմը: Նորա շնորհիւ Հէնրիկոսի կեանքը խաղաղ էր անցնում: Ռիչարդը շատ անգամ բերում էր նորա համար նկարած այգիներ և գառներ ու արհեստական ծաղիկներ: Փոքրիկ Հէնրիկոսը խաղում էր նոցա

հետ և անցուցանում էր իւր օրերը թղթից ծաղիկներ կտրելով և թերթեր նկարելով, որ սովորացրել էր նորան երիտասարդ Ռիչարդը, որովհետև նա տեսնում էր, թէ՝ ինչպէս հետաքրքիր նայում էր կոմը արհեստական ծաղիկների թէ ձևի, և թէ գեղեցկութեան վերայ: Ռիչարդը լաւ հասկանալով, թէ՝ որքան քաղցր տպաւորութիւններ է թափում երաժշտութիւնը միայնակ մնացած անմխիթար մարդու սրտի մէջ, նա բերեց մի քնար, և սովորացրեց նուագել նորա վերայ փոքրիկ կոմսին, և երգել զանազան երգեր:

Նուագելուց յետոյ երբ յոգնում էր մանուկը, նա վերցնում էր իւր խաղալիքները և զբաղվում էր նորանցով: Ամեն խաղալիքների մէջ նորա ուշադրութիւնը աւելի գրաւում էր ոսկեայ և ականակուռ շքանակի մէջ գրուած իւր մօր պատկերը, որ գողանալով կոմուհուց սենեակից չար պառաւը, իւր ուրախ բոպէներում ցոյց էր տալիս նորան:

Երիտասարդ Ռիչարդը նայելով յաճախ այն քնքոյշ պատկերին, հանդիսանում էր նորա յիշողութեան մէջ իւր մայրը, և տաք տաք արտասուքի կաթիլներ անհամար անձրևի նման շողացնում էր իւր աչքերից՝ անիծելով իւր կեանքը և միշտ մանուկ կոմից պահում էր իւր այս վշտալի կեանքի թարգման սուգը:

—Անբաղդ մանուկ, ասում էր նա ինքն իրան մէջ, թշուառութեամբ պիտի անցնի քո կեանքը, այո՛, թշուառութեամբ է մկրտուած քո ճակատագիրը այս սարսափելի տեղը ընկնելուց յետոյ... աւաղ քեզ, որ անգութ մարդոց ձեռքերը խլել են քեզ քո մօր գրկից: Ո՛հ, այժմ... ո՛վ գիտէ քո մայրը որքան ցաւում է քո համար, որքան արտասուքներ է թափում նա, երբ դու հեռու ես նորանից (և գուցէ բոլորովին մեռած)... Ես ինքս երևակայում եմ պարզապէս. որ այժմ կեանքը զզուացրել է նորան և շատ դառն է նորա համար:

Ա՛խ, այս որքան թոյլութիւն...որքան ուրախ կը լինեմ ես, եթէ կարողանամ դարձնել նորան իւր որդի կոմը...Ո՛հ, թշուառ մտքեր, ի՞նչու դուք պաշարում էք ինձ... ի՞նչու հանդիսանում էք իմ առաջև այն ժամանակ, երբ անկարելի է և անհնար այս բանը կատարելը, ազատութիւն գտնելը... Վա՜յ ինձ, ես ևս այս անիծեալ տեղում կատարեալ գերի եմ...քանի՞ քանի՞ անգամ կամեցել եմ ես ազատութիւն գտնել այս անաստուածների ընկերութիւնից, բայց այս աւաղակ, ինձ կասկածելի ընկերներս միշտ ծածկաբար և զգուշութեամբ նայում են իմ քամակից:

Հէնրիկոսի միտքը բանալու համար բարեսիրտ Ռիչարդը շատ անգամ պատմում էր նորան զանա-

զան պատմութիւններ, բայց երբէք չէր համարձակվում տալ Աստուծոյ անունը, որովհետև միւս բոլոր աւազակները սարսափում էին այս սրբազան անունը լսած ժամանակը, և բոպէ ցրոպէ սպասում էին նորա ահեղ ու սարսափելի բարկութեան շանթերին, որովհետև նոցա խղճմտանքը տանջում էր նոցա և իրանք հասկանում էին իւրեանց անմարդավայել գործերը...այն գործերը, որոնց համար Ամենակարող Աստուածը վրէժխնդիր է գործող անձանց իւրեանց յաւիտենական անզգուշութեան և անուինդրութեան համար:

Ե·

ԿՈՄՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Քանի մեծանում էր Հէնրիկոսը, այնքան ևս նորա մէջ շարժվում էր հետաքրքրութիւն իւր շրջակայքի վերայ: Երկար ժամանակ լուռ ու մունջ մնալով նա աւազակների քարայրի մէջ, վերջապէս կամեցաւ իմանալ աւազակների գնացած տեղը: Նա մի քանի անգամ խնդրեց, որ իրան էլ վերցնեն իւրեանց հետ, բայց միշտ նորան այն յիմար անգութները կոպիտ ու անտաշ բառերով բացասական պատասխաններ էին տալիս. բոլորովին արգելում էին այնտեղից հեռանալը:

Մի անգամ, երբ բոլոր աւազակները քարայրից դուրս գնացին իւրեանց չարութեան որսը գտնելու համար, Հէնրիկոսը մնաց միայնակ կախարդ կնոջ հետ, որոյ աչքերը ցաւում էին: Այն օրը նա նստել էր շերմայի հետևը և ոսկիներ էր համարում, բոլորովին զմայելով իւր ոսկիների բազմութեան վերայ, նա մոռացել էր մանկան հոգատարութիւնը: Ջ'անցաւ մի քանի բոպէ, պառաւը երկար ոսկիներ համարելուց յետոյ՝ թմրեցաւ, և ընկաւ նորա վերայ մի խոր քուն:

Այս միջոցը յարմար դատելով Հէնրիկոսը, քաջալերեց ինքն իրան, վառեց մի մեղրամոմ և սկսեց կամաց-կամաց երթալ դէպի այն ճանապարհը, որտեղից հեռացան աւազակները: Անբաղդ Հէնրիկոսը տխուր ու տրտում սկսաւ հետ դառնալ իւր նպատակին չը հասած, որովհետև նա մոտենալով երկաթեայ դռներին, չը կարողացաւ բանալ նոցա: Մինչդեռ նա վերադառնում էր, տեսաւ ճանապարհի վերայ մի քանի նեղ ստորերկրեայ շաւիղներ, որք տանում էին դէպի ցած՝ գետինը: Նա առանց վախենալու մտաւ այն անցքերից մէկի մէջ:

Խեղճ մանուկը այնքան երկար մնաց նորա մէջ, մինչև որ նորա ձեռքի մեղրամոմը բոլորովին մարեցաւ: Ահա այս իսկ տեղում արդէն նա նկատեց, որ իրանից քիչ հեռու երևում է մի այնպիսի

լոյս, որ երբէք ինքը տեսած չէր: Այս միջոցին հետաքրքրութիւնը աւելի ու աւելի բաղմացաւ նորա մէջ, Հէնրիկոսը սկսեց քիչ քիչ մօտենալ նորան: Լոյսը աւելի ու աւելի զօրանում էր, քանի՞ որ մանուկը մօտենում էր իւր ցանկալի առարկային: Բոլոր ոյժը մի տեղ հաւաքելով, փոքրիկ կոմսը սկսեց դիմել յառաջ և յառաջ. վերջապէս նա հասաւ այն տեղին, ուսկից կարելի էր ելանել ազատ օդի մէջ: Այսպէս քաջասրտութեամբ վերջին քայլը գործելով, գերի դարձած Հէնրիկոսը գտաւ ազատութեան նեղ ու փշոտ ճանապարհը երկար նեղութիւն և չարչարանք կրելուց յետոյ, աւազակաց ընկերութեան մութ և սարսափելի քարայրում երկար բնակուելուց յետոյ, վերջապէս բաղդը պսակեց նորա ճակատը անակնկալելի յաջողութեամբ:

Դուք, ո՞վ իմ սիրելի ընթերցող մանուկներ, դժուար կարող է մի ճարտար գրիչ նկարագրել այն ուրախութիւնը, որ զգաց իւր մէջ փոքրիկ Հէնրիկոսը, երբ նա, այնքան ժամանակ մութ քարայրի մէջ մնալուց յետոյ, կարողացաւ տեսնել գեղեցիկ կապոյտ երկինքը, բնութեան զարդարանք կազմող լեռները և բլուրները և դաշտերի վերայ սփռուած շքեղ բուսականութիւնը: Այն առաւօտը ամառային գեղեցիկ առաւօտներից մէկն էր: Արեգակը երկար մտատանջութիւնից յետոյ արդէն քիչ քիչ բաց էր ա-

նում իւր փայլուն լուսատու ճակատը, գեղեցիկ, սրտագրաւ կապոյտ երկնակամարի վերայ կարմրատակում էր շքեղ արշալոյսը, որոյ ծիրանաներկ շողշողիւնից լեռների գագաթները և անտառի ինքնաաճ ծառերի կատարները նմանապէս ստացել էին ալվարդակարմիր գոյն: Երկրի մակերևոյթը ծածկուել էր գեղեցիկ բազմազան խոտերով և անոյշաբոյր ծաղիկներով, որոնց մէջ թռչնիկները ճռուողելով թնդացնում էին օդը իւրեանց սրտառուչ երգերով: Ցափարակ հովտի մէջտեղում երևում էր մի պայծառ լիճ, որոյ մէջ պսպղալով լողում էին առաւօտու ճառագայթները և կանաչագունեղ լեռների գագաթները:

Այս բնութեան բոլոր բարիքները հիացմունք էին պարգևում Հէնրիկոսին: Նա բոլորովին քարացած մնացել էր կանգնած, կարծես թէ ընկղմուած էր մի քաղցր երազի մէջ. Նա չէր կարողանում ուղիղ քայլերով մանգալ, ամեն մի քայլափոխում նայում էր իւր շրջակայքը: Շատ սքանչանալուց յետոյ, բացագանչեց:

—Ո՜հ, այս ո՞ւրեմ ես...Այ՛ո՛ Ի՜նչ գեղեցիկ բաներ եմ տեսնում ես իմ շուրջը...այս ի՜նչ շքեղ տեսարան է...այս ի՜նչ հիանալի և ահագին առարկաներ են ինձ շրջապատել...

Այս մանկան ուշադրութիւնը սկսեց գրաւել

նախ՝ դարաւոր ժամանակներից բուսած կաղնին, երկրորդ՝ մոդ-կանաչ սօսիների տերևների սօսափիւնը, երրորդ՝ նորա առաջև բացուած գեղեցիկ ու փայլուն լճակի մակերևոյթը և չորրորդ՝ նորա աւերի մօտ բուսած թփերը ու կարմիր վարդերը:

Բայց այն ի՞նչ զարմանք էր, որ զգաց նա, երբ նորա աչքերին երևան եղաւ բլուրի քամակից կամաց-կամաց բարձրացող, փայլուն ամպերով պատած արեգակը: Մանուկը անսովոր կերպով սկսեց նայել նորա վերայ, կարծելով թէ՝ բլուրի հետևից բարձրացաւ ահագին բոց: Նա բոլորովին համբերութիւնը կորցրեց, երբ վերջապէս արեգակը կամաց-կամաց դէս ու դէն թեքելով իւր գլուխը, բլրից վեր բարձրացրաւ և Հէնրիկոսը տեսաւ արեգակի ամբողջ դունդը:

Հիացաւ, կարծես ուշքից գնալով, բացագանչեց:

—Ա՛խ, այս ի՞նչ եմ տեսնում ես... այս ի՞նչ զարմանալի ճրագ է:

Այս ասելով փոքրիկ կոմսը բարձրացրեց իւր ձեռքերը կամենալով բռնել նորան... սակայն արևը, երբ բարձրացաւ աւելի ու աւելի բարձր, այլ ևս Հէնրիկոսը չը կարողացաւ օրուան լուսատուի ուղիղ թափանցող վառ ու գեղեցիկ ճառագայթների վերայ նայել:

Մի քանի րոպէ այսպէս նայելուց յետոյ, նա

սկսեց շարունակել ճանապարհը, բայց նա շուտ շուտ կանգ էր առնում, որ մի՛ գուցէ ոտքի տակ առնէ դաշտի գեղեցիկ ծաղիկները: Ցանկարծ մի թփի տակ նա տեսաւ մի գառնուկ:

—Ա՜հա գեղեցիկ գառն, զարմանալով աղաղակեց մանուկը և վազեց դէպի նա բռնելու նպատակով: Փոքրիկ գառնուկը վերկացաւ տեղից և սկսեց մայել... սարսափը տիրեց Հէնրիկոսին, նա երկիւղից յետ փախչելով, բացագանչեց.—Այս ի՞նչ հրաշք է. այս գառնուկը կենդանի է և խօսել է իմանում, իսկ այնտեղ իմ գառնուկները անշարժ էին և անխօս:

Հէնրիկոսը մօտենալով գառնուկին, դրեց իւր ձեռքը նորա փափուկ մորթու վերայ և սկսեց խօսել նորա հետ, բայց շատ հարցնելուց յետոյ նա բարկացաւ, որ նա բոլոր նորա հարցմունքներին պատասխանում էր իւր անհասկանալի ու միատեսակ մայելով:

Փոքրիկ կոմսի ուշադրութեան առարկայ դարձաւ կրկին մի նոր երևոյթ, այս էր մի կենդանի բանական էակ: Սա ինքն էր մի մանուկ հովիւ, որոյ գեղեցիկ կերպարանքը, խարտեաշ մազերը, սպիտակ ու կարմիր թշերը տալիս էին նորան մի գերբնական գեղեցկութիւն: Սա օրոնում էր իւր կորցրած գառնուկը: Հովիւը կանգ առաւ մի րոպէի չափ և հիանալով նայում էր փոքրիկ կոմսի վերայ:

Մանուկ հովուի կերպարանքի վերայ արտա-
յայտուող բարութիւնը քաջալերեց Հէնրիկոսին, չը
նայելով, որ նա առաջ վախենում էր նորա վերայ
նայել։

—Ի՞նչ գեղեցիկ ես դու, աղաղակեց մանուկը։

Այս խօսքերից յետոյ ցոյց տալով նորան եր-
կնի կապտագոյն կամարը և այն կանաչ դաշտը, որոյ
վերայ կանգնած էին երկուքն էլ, շարունակեց.

Քի՞ղ է պատկանում այս ահագին քարայրը։
Ասա խնդրեմ, արդեօք կը թոյլատրես ինձ քեզ հետ
և քո գառնուկների հետ կեանք անցուցանել այս-
տեղում։

Հովիւը չէր հասկանում Հէնրիկոսի ասածները։
Նա կարծում էր թէ՝ իւր հետ խօսակցողը մի խե-
լագար ոմն է, ուստի և անմիջապէս հարցրեց նորան
նորա ծրտեղից լինելը։ Մանուկը պատմեց թէ՝ նա
դուրս է եկել գետնի տակ գտնուած մուտ քարայ-
րից, որը բնակվում են երկայնամիրուք աւազակները
և պառաւ կախարդ կինը։

Մանուկ հովուի գլխի մազերը ցցուեցին, երբ
լսեց այս խօսքերը, նա խաչաց մանուկի վերայ, գրկեց
նորան մի ձեռքով և գառնուկը միւս ձեռքով, շտապ
քայլերով փախցրեց կոմս Հէնրիկոսին։ Նորա սրտի մէջ
լցուել էր մահուան երկիւղը, որովհետև երևակայում
էր, թէ՝ իւր հետևից կը հասնեն աւազակները։

Զ.

ՃԳՆԱՒՈՐ

Լեռների մէջ տեղում մի խուղի մէջ բնակ-
վում էր մի ութսունամեայ ծեր ճգնաւոր մարդ։ Նա
բոլոր շրջակայքում յայտնի էր իւր իմաստութիւնով
և աստուածպաշտութիւնով, նորա անունը Մէյնրադ
էր։ Այն գտած մանուկը կամենում էր այս հովիւը
յանձնել անպատճառ այս բարեհոգի և բարեխիղճ
մարդուն։

Այս իսկ պատճառով նա գնաց դէպ ի ճգ-
նաւորի բնակարանը, որ գտնվում էր լերան ստորո-
տումը, գեղեցիկ լճակի ափերի մօտ։

Ճգնաւորի բնակարանը գտնվում էր գեղեցիկ
պտղատու ծառերի հովասուն ստուերների տակ և
նա ծածկուած ու շինուած էր եղեգներով և շատ
ոլորած խաղողի վազերով։ Նորա տան առաջև գտա
նուած գեղեցիկ ծաղիկներով լի այգին կազմում էր
նորա բնակարանի համար նշանաւոր զարդարանք։
Ցետին կողմում գեղեցիկ դրութիւն էր պարգևում
շրջակայքին լայնատարած արտը և պարտեզը։ Ամե-
նայն ինչ երևում էր մշակուած, այնպէս որ ոչ մի
կտոր հող չէր մնացել առանց օգտակարութեան։

Մի կողմից ցանուած էին պտղատու ծառերը, միւս կողմից—մրգաբեր թփերը:

Բարձրաւանդակ տեղում բուսած խնձորենուոյ տակ դրած էր մի նստարան, որտեղից հովիտը մի շքեղ տեսարան էր ցուցանում: Այնտեղ նստած էր պատկառելի ծերունին, երբ նորան մօտեցաւ հովիւը բռնած մանկան ձեռքից:

Ծգնաւորը ուշադրութեամբ կարդում էր այն ահագին գիրքը, որ նորա առաջև դրուած էր սեղանի վերայ: Նորա գլխի մազերը, ըստ մեծի մասին, թափել էին, բայց նորա միրուքը երկար էր և ճիւնի նման սպիտակ, իսկ երեսի վերայ փայլում էր միայն գեղեցկութիւն և առողջութիւն:

Ծգնաւորը քաղաքավարութեամբ բարևեց հովուին և ուշադրութեամբ ունկնդիր լինելով նորա պատմութեանը, քնքշաբար վերցրեց մանուկը, դրեց իւր ծնկան վերայ և հարցրեց նորանից նորա անունը: Նա հասկացաւ իւր մէջ, որ այս մանուկը նշանաւոր աղգատոհմից է և նորան փախցրել են աւազակները: Մէյնրադը 'ի խոր խոցուելով, ասաց.

—Դու ոչ ոքի բան մի՛ ասի՛ր, միայն մանուկը թող այստեղ իմ մօտ: Մինչև ես գտնեմ սորա ծնողքը, որ յուսով եմ շուտով կը յաջողուի, սա բոլորովին անվտանգ և աւազակների հալածանքներից ազատ կարող է մնալ իմ մօտ, վասն զի ես չունիմ

ոսկի և արծաթ, նոքա չեն մտենում իմ խրճթին: Բացի հարստութիւն չունենալը, նոքա սարսափում են ինձ մտենալ, որովհետև նոքա չեն սիրում Աստուծոյ պատուիրանքները և իւրեանց հոգւոյ աղատութեան հնարը լսել, որ, գիտեն, անշուշտ թափելու եմ իմ բերանից:

Յետոյ դիմելով դէպ 'ի Հէնրիկոսը, ասաց.

—Ես քո համար կը լինեմ քո հօր փոխարէնը: Սիրելի որդեակ իմ, դու կաց իմ մօտ, մինչև ես այս օրերս գտնեմ քո ծնողքը: Ուստի հենց այս րոպէից դու ունիս իրաւունք ինձ հայր կոչել և մխիթարուիլ անսրտում յոյսերով:

Նորեկ հիւրերի համար ծերունին բերեց հաց և դաթն: Հովիւը իւր կերակուրը վերջացնելով, կամենում էր վերադառնալ դէպի իւր հօտը, բայց տեսնելով Հէնրիկոսի դէմքին շուտ երևան եկող տրամութիւնը, նա թէք ընկաւ գետնի վերայ, խաղողի վազների ճիւղերի մօտ, և բերանը դնելով իւր հովուական երկար սրինգը, սկսեց ներդաշնակապէս շշշուացնել նորան: Ինութեանը տիրեց խորին լռութիւն և միայն լսելի էր հովուի սրինգի քաղցրիկ ձայնը, և հովուի սիրա գրաւող երգը: Մանուկ հովիւը նուագում էր սրինգը և սրտի զգացմունքներից յառաջացող տաքտաք արտասուքը աղի կաթիլներով թափվում էին նորա աչքերից:

Ծերունի ճգնաւորը զմայլեցաւ այսպիսի հովուական արհեստի վերայ, իսկ մանուկ կոմը իբրև մի անմեղ գառնուկ, սկսեց հիանալ և ուրախանալով վազեց-ընկաւ հովուի գիրկը: Մի փոքր ժամանակից յետոյ հովիւը վերկացաւ գնալու, բայց Հէնրիկոսը բռնելով նորա շորերից, չ'էր թողնում նորան հեռանալու, նա բարձրաձայն սկսաւ լալ նորա հրաժարման համար: Հովիւը շուտով հանգստացրեց նորան, հաւատացնելով, որ շուտով կը վերադառնայ և կը բերի իւր հետ մի գառնուկ նորան ընծայ: Փոքրիկ կոմը հանգստացաւ և շատ ուրախացաւ այնպիսի նուիրատվութեան համար, որովհետև մի գառնուկ ունենալը մեծ գին ունէր նորա համար:

Է.

ԱՐԵԳԱԿ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Մանուկ հովուի հեռանալուց յետոյ բարեհոգի ճգնաւորը նստացրեց փոքրիկ կոմսին իւր մօտ և սկսեց քաղցրութեամբ խօսել նորա հետ:

— Հէնրիկոս, ասաց նորան Ծերունին, պատմի՛ր ինձ խնդրեմ, գիտե՞ս մի որ և իցէ բան քո Ծնողաց վերայ:

— Ի հարկէ, պատասխանեց մանուկը, ահա ես իմ գրպանումս ունիմ իմ գեղեցիկ մայրը: Նայի՛ր...

Այս ասելով, նա հանեց իւր գրպանից իւր սիրելի մօր պատկերը, որ պահած ունէր խաղալիքների փոքրիկ կաշուէ ամանի մէջ:

Պատկերը բոլորը պատած էր ադամանդներով, նա երբէք լոյս ժամանակը չ'էր տեսել նոցա շողշողելը, ուստի՛ և շատ սկսեց զարմանալ նոցա փայլմունքի վերայ:

— Բո սենեակը ի՞նչու է այսպէս շատ լուսաւորուած, աղաղակեց Հէնրիկոսը:

Յետոյ ցոյց տալով արեգակի վերայ, զարմանալով շարունակեց,

— Այն վերևում վառուող գեղեցիկ ոսկի ճրագը, որ լոյս է տալիս մեզ, ասա՛ խնդրեմ, ո՞վ է վառել նորան: Մեր քարայրի մէջ վառուող ճրագը, համեմատելով սորա հետ, շատ աղօտ լոյս ունի: Ես չ'եմ կարողանում համարձակ նայել նորա վերայ... ինչո՞ւ համար այս վառ ճրագը քիչ քիչ բարձրանում է... Ես այս երևակայում եմ նորանից, որ երբ ես առաջ սորան տեսայ, սա դուրս եկաւ ծառերի յետևից և շուտով այնքան բարձրացաւ, որ ամենաբարձր ծառի կատարից չ'էր կարելի բռնել նորան:... Այդ ի՞նչպէս է կարողանում դա կախ տուած մնալ օդի մէջ և միևնոյն ժամանակը շարժուել: Ես չեմ կարողանում եղրակացնել այն՝ թէ ո՞վ է բռնում սորան և շարժում. և կամ ո՞վ է վերև բարձրանում

սորա մէջ իւղ ածելու, որ սա միշտ այսպէս վառ ու փայլուն կերպով լուսաւորում է:

—Որդեակ, ասաց ճշնաւորը, այս ահագին լուսատու մարմնոյ անունը արեգակ է: Նա քեզանից գոնէ մի հազար անգամ մեծ է և առանց իւղի է վառվում:

—Ես չեմ հասկանում քո ասածները, պատասխանեց Հէնրիկոսը:

Սորանից յետոյ մանուկ կոմը իրեն հայեացքը դարձնելով դէպի գեղեցիկ ծաղիկները, ասաց.

—Ո՛հ, այս ինչ սիրուն ծաղիկներ են...

Այս ասելով մանուկը վազեց դէպ ի բուրաստանի ծաղկոցը:

—Ի՞նչ գեղեցիկ ներկած են այս ծաղիկները... ինչպէս հնարագիտութիւնով կտրուած են սորա տերևները... Արդեօք ի՞նչից են սոքա շինած.., ինչպէս տեսնում եմ, սոքա ոչ թղթից են և ոչ էլ մետաքսից... Դո՞ւ ես շինել այս ծաղիկները... Երևում է, որ դու շատ ժամանակ ես կորցրել սոցա վերայ, ուրեմն և քո մկրատը և աչքերը շատ սուր պէտք է լինեն: Թէ և ես էլ կարողանում եմ ծաղիկներ շինել, սակայն իմ շինած ծաղիկները սոցա նման գեղեցիկ չեն:

—Սոքա հողից են բուսել, պատասխանեց ծերունին, մարդիկը երբէք չեն կարող սորա նման ծաղիկներ շինել:

—Ո՛չ, պատասխանեց Հէնրիկոսը, սոքա հողից բուսնիլ չեն կարող. այդ մի անկարելի բան է... ես աւելի շուտով կը հաւատամ, որ այս դու ինքդ ես շինել:

Ծերունին կտրեց մի կարմիր գեղեցիկ ծաղիկ և նորա բոլոր սերմերը թափելով իւր ափի մէջ, ասաց.

—Սոցա անունը սերմ է: Տեսնո՞ւմ ես այս փոքրիկ գնդաձև սերմերը, եթէ սոցա ցանենք հողի մէջ, այն ժամանակ իւրաքանչիւր սերմից կը բուսնի մի քանի այսպիսի գեղեցիկ ծաղիկներ: Սորա նման ես բոլոր այս զոյնզոյն ծաղիկները բուսնում են սերմերից...

Փոքրիկ կոմը չէր յագենում ծաղիկներին մոիկտալուց, նա մի փնջից դիմում էր դէպ ի միւսը, և դարձեալ ուշադրութեամբ նայում էր նորա վերայ: Սակայն այս միջոցին երկար դէս ու դէն նայելուց յետոյ, արեգակի տաք ճառագայթները սկսեցին անհանգիստ առնել նորան: Նորան զգալի կերպով ներգործելով այս կիզողութիւնը, աղաղակեց.

—Հայր իմ, զարմանալի բան է, քո ճրագը այսքան հեռու է մեզանից, բայց ի՞նչպէս տաքութիւն է ձգում նա իմ վերայ:

Մէյնրադ ծերունին բռնեց Հէնրիկոսի ձեռքը և տարաւ նորան խնձորենոյ ճիւղերու տակ, ուր տիրապետում էր սիրտ զմայլող ախորժելի զովութիւն:

Մանուկը տեսնելով այն ահագին ծառը, չկարողացաւ չը զարմանալ, ուստի և, զմայլելով, ասաց:

—Այս ինչ հովէ այստեղ և գեղեցիկ: Կարծես այս ծառը կախարդ կնոջ հովանոցն լինի, սա շատ լաւ զովութիւն է տալիս ինձ:

Ո՜հ, ինչ մեծ ծառ է, և որքան տերևներ կան սորա վերայ. չէ կարելի բոլորովին սոցա համարել: Ահա այժմ ես հաւատումեմ, որ այս տերևները քո ձեռագործը չեն, վասն զի սոցա վերայ պարապելու համար, հարկաւոր է խիստ շատ ժամանակ:

Ը.

ԲՈՑՍԵՐ ԵՒ ԾԱՌԵՐ

Երկար խօսակցելուց յետոյ Ծերունին մտաւ իւր սենեակը պատրաստելու մի որևիցէ բան ճաշելու համար: Չ'անցաւ մի քանի րոպէ վերադարձաւ նա, բերելով իւր հետ հաց, կաթն, մեղը, իւղ և մի փոքր զամբիւղ լեքը գեղեցիկ խնձորներ: Այս բոլոր բերածները Հէնրիկոսի համար էին: Իսկ իւր առաջև սեղանի վերայ դրեց մի քանի ծառոց արմատներ, մի դեղնագոյն սեխ և մի փոքր ևս կարմիր գինի:

Մանուկը բոլոր բերած բաները մեծ ախորժակով ուտելուց յետոյ, հարցրեց.

—Ասա խնդրեմ, ո՞րտեղից ես բերում այս ամենը, մի՞թէ դու ևս նոցա նման որսի ես գնում:

Ծերունին ակամայօրէն մի քաղցր ժպիտ խաղացնելով իւր դէմքի վերայ, ասաց.

—Որդեակ իմ, այս բոլորը բնութեան ձիրքերից եմ ընդունում ես, ահա տեսնո՞ւմ ես այս գեղեցիկ խնձորը, ես այս պոկեցի այն ծառից, որոյ ստուերի տակ մենք այժմ հանգիստ նստած ենք:

Հէնրիկոսը մի զարմանալի և անհաւատալի հայեացք ձգեց պատկառելի բարեսիրտ Ծերունւոյ վերայ, նա չէր հասկանում, թէ՝ ինչ եղանակով այսպիսի գեղեցիկ և անուշահամ պտուղը կարող է բուսնել ծառի վերայ:

Ճշնաւորը նորա կարծիքը փարատելու համար, բարձրացրեց նորան իւր ձեռքերի վերայ, բռնեց խնձորենւոյ մի ճիւղը, և, ցոյց տալով նորան կանաչ մանր խնձորներից մի քանի հատ, շարունակեց.

—Ահա պարզ ցոյց տամ քեզ բոլորը, տեսնո՞ւմ ես դու՝ ինչպէս սոքա բուսնում են ծառի վերայ: Սոքա առաջին անգամ լինում են շատ փոքր և անհամ, բայց սակաւ առ սակաւ սկսում են մեծանալ և համեղանալ: Բայց այս ահագին ծառը, որ իւր մեծութիւնով քեզ զարմանքի տեղիք է տալիս, բուսել է մի փոքրիկ սերմից:

Այս խօսքերը արտասանելու ժամանակ, նա

վերցրեց մի խնձոր, երկու կտոր արեց, և ցոյց տուեց փոքրիկ Կոմին նորա մէջ եղած սերմի կորիզները և ասաց.

—Այս ծառը, որ տեսնում ես դու, ես ինքս իմ ձեռքով եմ տնկել: Ես տեսել եմ ինչպէս աստիճան առ աստիճան սա սկսել է մեծանալ: Իւրաքանչիւր փոքրիկ սերմը ունի իւր մէջ այս ծառի կերպարանքի գաղափարը, իւրաքանչիւրից կարող է աճել մի մի ծառ և իւրաքանչիւրի վերայ կարող է լինել այնքան խնձորներ, որ մարդու համար անկարելի է նոցա մի առ մի համարել, և նա միշտ կարող է սննդիչ կերակուրներ պատրաստել նոցանից իւր համար:

Այսպէս խնձորի ինչ տեղից լինելը նորան հասկացնելուց յետոյ, վերցրեց ամանով սեղանի վերայ դրուած ցորենների մի բուռն ափի մէջ, և դարձեալ շարունակեց:

—Ահա նայիր այս հատիկներին...Այս հատիկներից շինվում է մեր ուտելու հացը... Սորա իւրաքանչիւր հատիկներից ժամանակով կարող է բուսնել հաղարաւոր սորա նմանը:

Ճգնաւորը տեսնելով նորա ուրախ ընկերաբար ունկնդրութիւնը, սկսեց պատմել նորան թէ՝ ինչպէս է լինում այս բոլորը: Ապա ցոյց տուեց նորան այն գեղեցիկ արտը, որոյ վերայ առաջ միայն աճում էին անպիտան խոտեր, անպտուղ ծառեր և

փուշ ու մացառ: Ճգնաւորի աշխատասիրութիւնով արտամախիլ էին եղած այս բոլորը, և նոցա տեղ բարձր կանգնած էր ցորենաբոյսը, որուն, մեղմիկ հովը փչելով, բարձր ու ցած տատանում էր հանդարտ հողմից շարժուող ծովի ալեաց նման: Հէնրիկոսը ուրախ ուրախ վազեց դէպի արտը: Նորա մէջ մտնելով նա տեսաւ՝ ի՞նչպէս իւրաքանչիւր հասկի վերայ կայ՝ին բազմաթիւ ցորենի հատիկներ:

—Ուրեմն հասկացի՞ր, սիրելի որդեակ իմ, ասաց Ծերունին: Մեզ շրջապատուող բոլոր բոյսերը, մեր ոտքի տակ ոչնչացող փոքրիկ խոտերից սկսած մինչև այն հեռուում երևող ահագին ծառերը առանց մի որ իցէ բացառութեան բուսել են հողի մէջ ցանուող փոքրիկ սերմերից: Այս բոլոր կերակուրները, որ այժմ դրուած տեսնում ես սեղանի վերայ, այս ամենը յառաջացել են սերմերից: Ահա կաթը գոյանում է այն խոտից, որ կերակրվում է կենդանին, մեղրը պատրաստվում է ծաղիկների մէջ գտնուած անուշահամ հիւթերից, որ հաւաքում է փոքրիկ մեղուն: Այս փայտեայ ամանը և այս սեղանը, որոյ վերայ դրուած են կերակուրները, իւրեանց գոյութիւնը առել են միայն փոքրիկ սերմերից, որոնց ինձ հարկաւոր էր միայն ցանել հողի մէջ, և ահա այս անելուց յետոյ, նոքա աճեցին, մեծացան և դարձան այսպիսի մեծ մեծ ծառեր և թփեր:

Անխօս, լուռ ու մունջ կանգնած մանուկը լսում էր ուշադրութիւնով Ծերունուոյ ասածներին: Բոլոր պատմութիւնը նորա համար անհաւատալի էր երևում, և շատ անգամ Ծերունի Մէյնրադի խօսակցութեան բառերից շատերը նա չէր հասկանում:

Թ.

ԱՂԲԻՒՐ ԵՒ ԱՆՁՐԵՒ

Ծաղիկներից շատերը սկսեցին թառամել, երբ արեգակը կամաց-կամաց խոնարհեցնելով իւր լուսատու աչքերը, սկսեց ցած իջանել կապոյտ երկնակամարի անհուն տարածութեան վերայից: Նախազգուշութիւն պահպանելու համար Մէյնրադը մտածեց ջրել ծաղիկները, թէև ծածկուած ամպերին նայելով, նա պարզապէս գիտէր շուտով անձրևի վերահասութիւնը: Վերցնելով Ծերունին ջուր սրսկելու ամանը, կանչեց մանուկը, և երկուսը միասին գնացին խոտերով պատած այն քարի մօտ, որից բղխում էր ահագին խոխոջմունքով մի գեղեցիկ, մարդու սրտին զովութիւն և ուրախութիւն տուող աղբերակ:

Հէնրիկոսը զմայլմունքից այլ չը կարողացաւ իւրեան պահել, նա զարմանալով բնութեան այս-

պիսի շքեղութեան վերայ, ծափահարելով աղաղակեց:

—Զարմանալի՜ իրողութիւն...Ո՜հ, որքան ջուր է բղխում այս քարից...կարծեմ այս բոպէին սա կը ցամաքի...Բայց չէ...ջուրը դարձեալ յորդ յորդ բղխում է: Ո՞վ է անդադար սորա մէջ լցնում այսքան ջուր: Ես կարծում եմ, որ աւելի լաւ կը լինէր, եթէ դու փակէիր սորա ծակը, ապա թէ ոչ կարող ենք շուտով առանց ջրի մնալ:

Ճգնաւորը քաղցրաբար պատասխանեց:

—Իմ սիրելի Հէնրիկոս, դու անհանգիստ մի՛ լինիր, այս տեղից ջուրը ցամաքել չէ կարող: Միշտ սա բղխում է այս ժայռից և միշտ էս կը բղխէ:

Այս խօսքերը արտասանելուց յետոյ Մէյնրադը ցոյց տուեց նորան իւրեանց մօտ գտնուած ճակը և դարձեալ շարունակեց.

—Այս էս ջուր է...իմ հոգեակ:

Ծերունուոյ ասած այս խօսքերը բոլորովին անհաւատալի եղան նորա համար...որովհետև նա մինչև ցարդ կարծում էր, որ լիճը ոչ թէ ջուր էր, այլ մի մեծ ու ահագին հայելի, որոյ մէջ կարող է խաղալ արեգակի փայլուն լոյսը և մարդու ուրախ և կամ տխուր կերպարանքը:

Ամանը լիքը ջրով լցնելով, ճգնաւորը փոքրիկ կոմի ձեռքը բռնած, եկաւ ծաղկաստանը, և

սկսեց կամաց կամաց ջրել արեգակի տաք ճառագայթներից խորոված և ծարաւած ծաղիկները:

Այս տեսնելով մանուկը, շփոթուեցաւ, արտասուքը սկսեց նորա աչքերում խաղալ, նորա այտերից սկսան թափուել մի քանի տաք տաք աղի կաթիլներ գլոր-գլոր դէպի նորա գեղեցիկ վարդանման թշերը: Նա աղաղակեց.

—Ո՜հ, այդ ի՞նչ ես անում հայրիկ:... Ի՞նչու դու ոչնչացնում ես այս գեղեցիկ ծաղիկները... Ես ափսոսում եմ սոցա, վասն զի կը գունատուեն՝ բոլորովին և կը կորցնեն իւրեանց փոխմ գեղեցկութիւնը:

Ծերունին հանդարտացրեց մանուկը և հաւատացրեց նորան, որ ծաղիկները ջրել անհրաժեշտ հարկաւորութիւն է, ուստի և ասաց.

—Սիրելի որդեակ իմ, դու գիտես, որ մարդս չէ կարող ապրել առանց ջրի, այնպէս էլ բոլոր բոյսերը, ամենափոքրիկներից սկսած մինչև ամենամեծագիներները, կը չորանան անպատճառ՝ մինչև չը տալ նոցա իւրեանց կենսատու առարկայ ջուրը: Օրինակ վեր առ որը կամենաս՝ թէ ծաղիկը, թէ խոտը, թէ ցորեանն ու գարին, թէ ծառերը և թէ թփերը... մի խօսքով ոչինչ բան առանց ջրի չէ կարող ապրել ոչ մի ժամանակ:

—Շատ լաւ. համոզուելով և ուրախացած պատասխանեց մանուկը... բայց, ասա՛ խնդրեմ, ո՞վ

կարող է այնքան ջուր բերել, որ կարողանայ բաւականութիւն տալ բոլոր բոյսերին: Ո՞վ է բարձրանում այն սարերի կատարների վերայ՝ նոցա վերայ բուսած բոլոր ծառերը և խոտերը ջրելու համար:

Մէյնրադը իւր հայեացքը ձգելով դէպ ի ամպերով ծածկուած երկինքը, շարունակեց.

—Որդեակ իմ, դու շուտով կը տեսնես, թէ ինչպէս է լինում այդ բանը, ինչպէս ջրվում են լեռների վերայ գտնուած ամենայն ծառերը և բոյսերը:

Այս խօսքերից յետոյ չանցաւ երկար ժամանակ, երկնքի վերայ պատեց մթութեան մառախուղը և սկսեց անձրև գալ: Հէնրիկոսը չէր կարող չը զարմանալ առաջին անգամ անձրևի տեղալը տեսնելով. ուստի և բացագանչեց ուրախութեամբ.

—Տես ի՞նչ հաւասար կաթիլներով ջրվում են մեր ծաղիկները, կարծես սոքա ջուր դիտող մարդկանից լինեն թափուելիս... Ո՞րքան գուարթութիւնից սոքա ազատեցին քեզ, որքան թեւակոխելուց քո աշխատանքից: Ո՞վ է վերևում դրել այդ հազին առարկաները, որոնց դու ամպ անուանես տալիս: Այն ո՞վ է վերև բարձրացրել այսքան ջուրը: Ի՞նչպէս կարողանում են օդի մէջ քարշ ընկած մնալ ամպերը և չընկնել մեր վերայ:

—Այս բոլորի պատճառները դու կիմանաս շուտով. պատասխանեց Ծերունին:

Փոքրիկ Կոմսի ուշադրութիւնը, գրաւեցին ամպերը, անդադար նայում էր նոցա վերայ, մինչև որ նոքա հեռանալով, բացուեցան երկնքի կապոյտ, պարզ կամարը:

Հազարաւոր պատահած առարկաները աչքի անցուցանելուց և հետաքրքրութեամբ քննելուց, նորա համար շատ շուտով անցաւ օրը: Տեսնելով նա այն առարկաները, որ երբեք տեսած չէր, ընկնում էին նորա սրտի մէջ հիացմանց և ուրախութեանց զգացմունքներ: Չէր կշտանում նա զոյնզգոյն թիթեռներին նայելուց, նա չէր կարող չուրախանալ, երբ տեսաւ այն փոքրիկ խեցեմորթը, որ անձրևի կաթիլներից յետոյ գոհարի նման փայլուն կերպարանք ստանալով նորա մորթը, կամաց-կամաց բարձրանում էր ծառի կեղևի վերայով: Մանաւանդ նա չէր կարող անզգայ մնալ, տեսնելով գեղեցիկ փոքրիկ թռչունների ծառէ 'ի ծառ, և տերևից տերև թռչելը, նորա անմեղ երգասացութիւնը, և ճղնաւորի դէս ու դէն ընկնող, խաղացող այծերը:....

Այս բոլոր զորձողութիւնքը անասելի և նոր լինելով նորա համար, առաջարկում էր Ծերունի Մէյնրադին այնքան հարցեր, որ հազիւ կարողանում էր իւրաքանչիւր հարցին պատասխանել:

Արդէն մթնելու ժամանակ էր. արեգակը թաղկացրեց իւր լուսափայլ երեսը լճակի քամակում:

Հէնրիկոսին պատելով սարսափը, նա աղաղակեց.

—Այհա երկնային ճրագը ցածացաւ դէպ ի ջուրը և այնտեղ նա կը հանգչի, այնուհետև ի՞նչով մենք կարող ենք լուսաւորել այս ահագին ու մեծ տարածութիւնը:

Մէյնրադը տեսնելով մանկան անհանգիստ լինելը, հանդարտացրեց նորան, ասելով.

—Սիրելի Հէնրիկոս, մի՛ վախենար: Ճրագը այժմ մեզ պիտանի չէ, որովհետև մեզ հարկաւոր է քնել: Մեր զարթնելուց առաջ արեգակը հակառակ կողմից դարձեալ կը ծագէ այն երկու բլուրների միջանցքում.... նա միշտ սոյն իսկ օրինակով ծագում է և մայր է մտնում լուսաւորելով և տաքացնելով համայն բնութիւնը:

Յ.

ԱՐԺԱՆԻ ՀԱՐՑՄԱՆ ՈՒՂԻՂ ՊԱՏԱՍԽԱՆ:

Բարեսիրտ Ծերունի Մէյնրադը կամենալով աւելի ու աւելի բաղմացնել փոքրիկ Կոմսի հետաքրքրութիւնը, սկսեց նորա առաջարկած հարցերը կարճառօտ պատասխաններով լուծել:

Մանկան հարցերը անսպառ էին, նա դարձեալ շարունակեց նայել իւր շրջակայքը և մտատանջութեամբ ասաց.

—Ո՞վ է դէս ու դէն շարժում արեգակը... Այն կապոյտ կամարը, որ մեզանից վերև երևում է, ո՞վ է հաստատել... Ո՞վ է այնքան ջուր ածել այն քարի մէջ... Ո՞վ է շարժում ամպերը և կամ բռնում օդի մէջ... Այն ի՞նչ է նորա անունը, որ ծաղիկների վերայ թափում է ջրի կաթիլներ... Ի՞նչ է նորա անունը, որ սովորացրել է թռչնիկներին առանց քնարի երգել... Ո՞վ է նա, որ փոքրիկ սերմերի մէջ դրել է այնքան ծաղիկներ ու ծառեր... Այն ո՞վ է, որ մեծացնում և աճեցնում է նոցա... Ո՞վ է երկրի մակերևոյթը կանաչ դաշտերով զարդարողը... Ո՞վ է այս ամէն բաների իմաստուն ճարտարապետը-..

Մէյնրագը արդարև տեսաւ նորա մէջ մեծ հետաքրքրութիւն, կարծես թէ նորան մի գաղտնի զօրութիւն հրաւիրում էր Սրարչի անունը իմանալ, տիեզերքի Ստեղծողը ճանաչել, վասն որոյ ուրախանալով այդ հանգամանքի եղելութեանը, ասաց.

—Ուրեմն դու մտածում ես, որ անշուշտ պիտի լինի մի ամենախելօք էակ, մի իմաստուն ճարտարապետ և ամենազօրմանծ ոմն, որ սահմանել է այս բոլորը:...

—Յիմարութիւն և անզգայութիւն կը լինէր դորա

մէջ կասկածանք ունենալը... Ի հարկէ մի նշանաւոր մասն խառն է սոցա մէջ, որ սոքա յաւիտեան պահպանվում են. վճռաբար պատասխանեց Հէնրիկոսը: Փորձով այս բոլորը հասկանում եմ, վասն զի երբ ես գանվում էի աւազակաց բնակարանում, նկատեցի, որ եթէ կամենում էին իւրեանց բնակարանի մէջ մի ամենափոքր փոփոխութիւն անել, այն նոցա արժան չէր նստում, նոքա երկար ու ձիգ աշխատում էին իւրեանց նպատակին հասնելու համար: Յիշում եմ ես այն նեղութիւնք ու դժուարութիւնքը, որ կրեցին նոքա, երբ մի օր քարայրի մի մասն քանդուելու վեռայ էր: Ես չեմ կարող պատմել թէ որքան աշխատելուց յետոյ կարողացան պնդացնել նորա կամարը ահագին սիւներով... Սակայն ես զարմանում եմ, երբ քո այս ահագին գեղեցիկ կամարի տակ չեմ տեսնում ոչ մի սիւն: Այնտեղ, աւազակների քարայրի մէջ, ճրագը միշտ վառ չէր կարողանում լինել, մինչև ամենայն օր չէին լցնում նորա մէջ մեծ ամանով իւղ: Ես տեսնում էի, որ նոքա միշտ գնում էին և հեռու տեղից բերում էին ջուր և լցնում էին իւրեանց ամանի մէջ ծարաւամահ չը լինելու համար: Ես հասկանում եմ՝ որքան դժուար է մարդու համար և երկարատև ծաղիկներ կորտելը: Ուրեմն ես երևակայում եմ, որ իմ շուրջը տեսնուող բոլոր բաները, մարդս չէ կարող բոլորը շինել. ուստի և

շատ ցանկանում եմ դիտենալ թէ ո՞վ է նա և ի՞նչ է նորա անունը, որ սահմանել է այս ամենը:

Այժմ արդէն իսկ հասաւ ժամանակը, որ բարեսիրտ ծերունին պիտոյ է սովորացնէր նորա Ամենաբարձրելոյ անունը, պիտոյ է քարոզէր նորան Աստուծոյ Ամենակարող, Ողորմած և իմաստուն լինելը: Հասան այն ժամերը, որ նա պիտի կատարէր մի վերին և Արքայական պարտականութիւն: Այժմ նա արդէն պարզ հայելոյ նման տեսաւ նորա սրտի մէջ այն տպաւորութիւնները, այն անպատմելի ու հուչակաւոր հիացման նշոյլները, որ ձգել էր նորա մէջ գեղեցիկ և շքեղաշուք բնութիւնը: Նորա աչքերի մէջ խաղացին արտասուքի հեղեղները, մի կցկտուր ձայնով սկսեց պատասխանել մանկան հարցերին.

—Իմ ամենասիրելի Հէնրիկոս որդեակ. արդարև դու չը սխալուեցիր, հաւատիանալով, որ կայ մի ամենաողորմած էակ, որ սահմանել է այս ամենայն քո տեսածները: Այո՛, այս մեզ շրջապատող առարկաները ունեն մի ամենաճարտար Արարիչ և Ստեղծող: Նորա անունն է Աստուած. նա Ամենուրեք է. ո՛չինչ բան չէ կարող ծածուկ մնալ նորանից...Նա գիտէ մարդուս սիրտը...Նա ստեղծել է նորան և ամբողջ աշխարհը, վասնորոյ մարդս պարտական է նորան իւր կեանքով: Ո՛չինչ բան չէ կարող տկարանալ նորա առաջև...Նա Ամենակարող,

Ամեն իմաստ և Ամենաողորմած է: Նա գիշեր ու ցերեկ անքուն աչքերով հսկում է մեր ամենիս վերայ, նա տալիս է ուրախութիւն և կեանք իւր բոլոր ստեղծուածներին:

Մանուկը չը զգաց իւր հոգւոյ մէջ այն վեհ զգացմունքը քարայրից լոյս աշխարհ մտնելու ժամանակը, որքան այժմ, երբ նա լսեց և իմացաւ Արարչի անունը. երբ նա իմացաւ, որ Աստուած ամենքի միակ Ստեղծողն ու Հայրն է: Բոլոր բնութիւնը այժմ առնչի ուրախալի և գեղեցկագոյն երևաց Հէնրիկոսի աչքերին...նորա մէջ թափուեց մի գերբնական զգացմունք, նորա սրտի մէջ վառուեցաւ մի անսրեւոյթ սիրոյ լուսաւոր ճրագ:

Ծերունի Մէյնրադը նկատելով թէ՝ որքան ազդեցութիւն գործեցին իւր խօսքերը Հէնրիկոսի վերայ, նա դարձեալ շարունակեց.

—Այո՛, իմ սիրելի Հէնրիկոս, այս ամենը, ինչ որ տեսնում ենք մեր շուրջը, ստեղծել է Աստուած: Այն կապոյտ կամարը, որ մենք երկինք ենք կոչում, հաստատել է նորա Ամենակարող աջը: Նա իւր ամենիմաստ հանճարով վառում է արեգակի լոյսը աշխարհի համար և շարժում է նորան: Աստուած և Արարիչ է նորա անունը, որ քարերի միջից բղխեցնում է անսպառելի ջրեր, որ երկիրը և նորա վերայ գտնուած բուսականութիւնը զովաց-

նելու համար թափում է երկնքից անձրևի կաթիլներ: Այո՛, Աստուած է նորա անունը, որ երկիրը զարդարել է խոտերով և ծաղիկներով: Նա թափել է ծաղիկների մէջ անոյշ բուրմունք, որ մեխթար լինին մարդու սրտին նորա տխրութեան ժամերում: Նա չը կամենալով մեր սովամահ լինելը, ածեցնում է ցորեանը: Նա չը կամենալով մեզ առանց բաւականութեան թողուլ, ծածկել է ծառերը տերևներով և անդիմ պտուղներով: Նա կամենալով մարդուն զուարճացնել, տուել է թռչնիկներին երգելու շնորհք, չը կամենալով մեզ առանց հանդերձի թողուլ, ոչխարների մարմինը ծածկել է փափուկ բրդով... մի խօսքով, նա մեր համար գործում է այն, որ կարող է պահպանել մարդոյ կեանքը: Նա արդէն առաջուց քաջ գիտէ մեր գաղտնի մտքերը, մեր իրաքանչիւր քայլափոխում մեզ հետ է և լսում է մեր բոլոր խօսակցութիւնքը, թէև մենք չ'ենք տեսնում նորան, վասն զի նա լոյս է և մարդու աչքերը սկսած են նորան տեսնելու համար: Մեր դատաստանը, մեր բաղդաւորութիւնը, մեր փառք ու պատիւը նորա ձեռքին է: Նորա ամենամեծ ողորմածութիւնն էր, որ քեզ այնքան ժամանակ անխոնջ պահեց աւազակների քարայրի մէջ, և վերջապէս այն տեղէն ազատութեան ճանապարհը պատրաստեց քո համար: Այո՛, Աստուած մեր ամենամեծ բարերարն է,

մեր ամենալաւ բարեկամն է, մեր ամենասիրելի և ամենաբարի Հայրն է:

Ուշադրութեամբ լսում էր Հէնրիկոսը ծերունոյ խօսքերը: Արդէն օրը գիշերուան փոխուեց, երկնի կապոյտ հորիզոնի վերայ սկսեցին ցոլալ աստղերը և նոցա մէջ բացեց իւր ճակատը երկնի պարկեշտասուն թագուհի փայլուն արծաթափայլ լուսինը: Երկնից արծաթի փայլմունքը նկարագրութիւն ստացան լճակի մէջ, նորա փայլուն մակերևոյթի մէջ երևանէին լինում աստղերը և լուսինը: Ամեն տեղ թագաւորում էր լռութիւն... ոչ մի տեղ այլևս չէր լսվում ծառերի տերևների սոսափիւնը: Այս ամենը Հէնրիկոսի սրտի մէջ մի անառելի զգացմունք թափեցին:

Ո՜հ, այն ինչ տեսարան էր, այն ինչ մի երկնային երևոյթէր, երբ պատկառելի բարի ծերունորը խաչելով իւր ձեռքերը և վերս առաքելով իւր հայեացքը դէպ'ի երկնի անհուն տարածութիւնը, սկսեց սրտառուչ կերպով աղօթել դէպ'ի Ամենաբարի Արարիչը, և Հէնրիկոսը ևս միևնոյն խօսքերը կրկնելով, մատուցանում էր իւր աղօթքը Ստեղծողին: Արտասուքը լուանում էին Հէնրիկոսի թշերը, երբ յիշում էր այն ողորմածութիւնը, որ արեց նորան Աստուած, թէ և նա մինչև այսօր չը գիտէր նորա ամենաբարի անունը:

Բայց դժուար է այստեղ բառերով արտայայտել այն ուրախութիւնը, որ տիրեց ճգնաւորին. երբ փոքրիկ Կոմը ճգնաւորի հետ աղօթքը վերջացնելուց յետոյ, ծունկ չոքեց և միայնակ շարունակեց իւր աղօթքը, ասելով այս խօսքերը.

—Ամենակալ Աստուած իմ, իմ մանկական լեզուն տկար է արտայայտելու այն վսեմ շնորհակալութիւնը, որով լցուած է իմ սիրտը, վասն զի Դու քո ամենաողորմածութեամբ ազատեցիր ինձ աւազակների քարայրից և ձգեցիր այս բարեհոգի ծերունու ձեռքը, որ սովորացրեց ինձ քո անունը և գթեց սիրելը:

Ճգնաւորը բռնեց մանկան ձեռքիցը և տարաւ նորան իւրեանց խրճիթը: Այնտեղ փոքրիկ Կոմի համար նա պատրաստեց անկողին և խնդրեց հանգստանալու անոյշ քնով: Հէնրիկոսը սկսեց կամաց կամաց հանել իւր շորերը և վերջապէս հանուելուց յետոյ պառկեցաւ: Ծերունին իւր լոտիկը ծածկեց նորա վերայ գիշերային ցրտից անհանգիստ չը լինելու համար, և բարեմաղթելով բարի գիշեր, ինքն ևս քնեցաւ:

ԺԱ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԼԵՌՆԵՐԻ ՄԷՋ:

Ծերունի Մէյնրադը կարծելով, որ հասարակ կերակուրը և առողջարար մաքուր աղատ օդը կարող էին վերստին նորոգել փոքր Հէնրիկոսի առողջութիւնը, և մանաւանդ կարող էին մոռացութեան տալ այն սովորութեանցը, որ նորա մէջ պաշարուել էր աւազակների հետ բնակուելու ժամանակից, նա վճռեց մանուկը պահել իւր մօտ ամբողջ ամառ: Նա ցանկանում էր, որ նորան յանձնել իւր ծնողաց բոլորովին կրթուած և առողջակազմ:

Արդարև ծերունւոյ մտքերը 'ի կատար ածուեցան: Մանուկը Հէնրիկոսը օրէ օր ամրացրեց իւր կազմուածքը և առողջացաւ: Ուրախանալով այսպիսի յաջողութեան վերայ, Մէյնրադը փառք էր տալիս երկնքի և երկրի տէր Արարչին, որ իւր աշխատանքները 'ի զուր չանցան: Ամառուան գեղեցկագոյն ժամանակները թև առան-թռան, ահա եկաւ և զովաբեր աշունքը: Մէյնրադը ժամանակ համարելով մանկան ծնողքը գտնել, վճռեց ճանապարհորդել և հարցնել մարդոց մէջ իւր նպատակը յառաջացնելու համար: Որպէս զի Հէնրիկոսը չը մնար միայնակ ճգնաւորի խրճիթում, մանուկ հո-

վուի հայրը համաձայնեցաւ նորան իւր մօտ պահել Ծերունի Մէյնրադի բացակայութեան ժամերում:

Հովուի ծնողքը բնակվում էին լեռների քամակում գտնուած հովտի վերայ:

Սոր Լինոր արեգակը արդէն իւր վառ ճառագայթները սկսել էր ձգել նոցա բնակարանի վերայ, երբ Մէյնրադը արթնացրեց քաղցրիկ քնով հանգստացած մանուկը: Ծերունի ճգնաւորը իւր դողդոջուն ձեռքերը բարձրացնելով դէպի կապոյտ երկնակամարը, սկսեց ջերմեռանդութեամբ մատուցանել իւր աղօթքը բարձրեալ Արարչին, խնդրելով, որ նա յաջողակութեամբ պատէ իւր այս ճանապարհորդութիւնը: Ապա նա և մանուկը մի թեթև նախաճաշիկ վայելելուց յետոյ ուղղեցին իւրեանց ճանապարհը դէպի այն հովիտը, որ գտնվում էր լեռների քամակում: Հէնրիկոսի սրտի մէջ նոր նոր յիշատակներ էին լցվում, նա ուրախանում էր, երբ մտածում էր, որ նոր երիտասարդներ պիտի տեսնի: Ճանապարհը դժուարանց էր, նոքա գնում էին այն շաւիղներով, որ յայտնի էին միայն հովիւներին և որսորդներից մի քանիսներին:

Արդէն ճաշի ժամանակ էր, երբ նոքա հասան այն լերան ծուռ ու մուռ ստորոտներին, որոյ գագաթի վերայ արածվում էր այծերի մի հօտ: Կէսօր անդադար ճանապարհորդելուց նոքա արդէն յոգնել էին: Այնտեղ նոքա նստեցին ծառի հովացնող ստուերի տակ և ճաշեցին մեծ ախորժակով:

Հովուի փոքրիկ որդին տեսնելով Ծերունի Մէյնրադին, շտապ քայլերով վազեց դէպի նա և համբուրեց նորա ձեռքը: Հէնրիկոսը այստեղ ահա սաստիկ զարմանալով, վեր կացաւ իւր նստած տեղից և ողջակեց.

— Ո՜հ, ինչ զարմանալի հրաշք է: Ես կարծում էի, թէ Աստուծոյ ստեղծած աշխարհի մէջ միայն եսեմ փոքրիկ մարդը, բայց ահա այժմ տեսնում եմ, որ կայ էլ ինձ նման փոքրիկ մարդ էլ: Ա՜խ, ինչ գեղեցիկ ես դու, իմ սիրելի, սասց փոքրիկ կոմսը, համբուրելով նորա ճակատը: Ա՜խ, դու կը ցանկանայի, որ դու էլ մեզ հետ գայիր, դու սորանով կը պարգևես ինձ մեծ բաւականութիւն:

Փոքրիկը հովիւը վերցնելով Ծերունի Մէյնրադի պարկը, որոյ մէջ գրուած էին իւրեանց ճանապարհի պաշար մի քանի հացը, բռնեց Հէնրիկոսի ձեռքը և քաղցր խօսակցութեամբ շարունակեցին Մէյնրադի հետ իւրեանց ճանապարհը: Այս անգամիս փոքրիկ հովիւը գրաւել էր Հէնրիկոսի ուշադրութիւնը, և նա այլևս բնութեան գեղեցիկ շրջակայքի վերայ չէր զարմանում:

Ծանր ու բարակ ճանապարհ շարունակելուց յետոյ մեր ուղևոր հերոսները հասան արդէն մի

փոքրիկ կանաչ հովի մոտ, որի շուրջը բարձրացրել էին իւրեանց գագաթները մի քանի ահագին քարաժայռեր: Այնտեղ, այն կանաչ տափարակի վերայ, դարմանվում էին այն դիւզացու ոչխարները, որոյ մոտ գնում էր Ծերունի ճգնաւորը:

Մի անպատմելի ուրախութիւն տիրեց Հէնրիկոսին, երբ նա տեսաւ այնքան բազմաթիւ միասին արածուող ոչխարներ: Մանաւանդ աւելի ու աւելի հրճվում և զուարճանում էր նա՝ նայելով նորածին գեղեցիկ գառնուկներին: Նա քսում էր ձեռքը նոցա փափուկ բրդի վերայ և տալիս էր նոցա ամենասիրելի և ամենաքնքոյշ փաղաքշական անուններ:

Ծերունին այս և այն կողմերը նայելով փնտռում էր Հովիւը...բայց որքան զարմացաւ, երբ քարաժայռի ստորոտի մոտ նա տեսաւ մի մատաղ օրիորդ, որ մի ձեռքում բռնած ունէր հովուական գաւազանը, իսկ միւս ձեռքում մի փոքրիկ դիրք, որն կարդում էր ամենախորին ուշադրութեամբ: Ծերունին կամաց կամաց մօտեցաւ նորան: Այն օրիորդի հանդերձները ապիտակ էին, իսկ նորա գլխի կանաչ գլխարկը պահպանում էր նորան արեգակի այրող ճառագայթներից: Մատաղ օրիորդի դէմքի գծագրութիւնը ցուցանում էին մի հեզ բնաւորութիւն և մեծ արժանութիւն: Զը նայելով, որ նա բոլորովին տեսած չէր Մէյնրադին, բայց նշմարելով նորա պատ-

կառելի և բարեսիրտ ցուցանող դէմքը, խորին յարգանօք ողջունեց Ծերունուն:

—Դու շատ ժամանակ է որ դարմանում ես այս հօտը...հարց արեց Մէյնրադը:

—Ես, վաղուց արդէն, համարեա թէ երեք տարուց աւելի է, տարածացնում եմ այս լեռների մէջ ոչխարների հօտեր...սակայն այս իմ նոր պարոնին միայն երեք օր է, որ ես առաջարկել եմ իմ ծառայութիւնը. պատասխանեց հանդարտութեամբ պարկեշտասուն օրիորդ հովիւը:

—Բայց ասա, խնդրեմ, ո՞ր տեղացի ես դու, և ի՞նչու է տխուր քո դէմքը:

Այս հարցի ժամանակ օրիորդի հին հին ցաւերը նորոգուեցան, կարծես մի սուր խթան ցցուեց նորա թոքերի մէջ, նա չը կարողացաւ այլևս զինքը պահպանել, արտասուքը կամաց կամաց աշնան ցողի նման գլորուեցան նորա աչքերից դէպի գետին, նա ցաւակցաբար պատասխանեց:

—Ո՜հ, մի՛ հարցանէք ինձ իմ նեղութիւններս...այո՛, ես հեռու տեղից եմ եկած, իմ հայրենեաց հողը հեռու է ինձանից: Իմ թեթևամտութեան անձնատուր լինելը ինձ կորստեան պատճառ դարձաւ, բացեց իմ համար անդնդի մութ դռները...ո՜հ, այդ մի անիրաւ անզգուշութիւնը զրկեց ինձ այն բարի տիրուհուց, որին ես ուրա-

խուԹեամբ և շնորհակալուԹեամբ ծառայում էի։ Աւաղ, երբ ես մտաբերում եմ այն մի քառորդ ժամի անզգուշուԹիւնը, որով ես կորցրի օրօրոցի միջից փոքրիկ կոմսը, որով ես խլեցի իւր մոր խանդակաԹ գրկից նորա ամենասիրելի զաւակը, սիրտս կտրատվում և մաշվում է։ Այո՛, մի քառորդ ժամ հեռանալով նորա օրօրոցից, աւազակները յափշտակեցին նորան։ Նորա մոր ամենայն աւուրց արտասուքները երբ տեսնում էի նորա երեսից գլորուելիս, յուսահատվում էի և ցանկանում էի մահս, վասն զի իմ ազգուշուԹիւնից յառաջացան այս բոլոր ձախորդուԹիւնները։ Ես այլևս չը կարողացայ համբերել, իմ խղճմտանքս անդադար տանջում էր ինձ, վասն որոյ և ես եկայ այս լեռները ընկայ, ուր աղօԹում եմ գիշեր ու ցերեկ սիրելի մանկան իւր բարի մօրը դարձի համար։ Ես յուսով եմ, որ երկնքի և երկրի տէր Արարիչը տեսնելու է իմ արտասուքը և խղճալու է նոցա վերայ...այո՛, նա է միայն վկայ իմ արտասուքին և այս ահագին քարաժայռերը նորա հետ։

Ճգնաւորը տեսնելով նախախնամողի ամենաողորմածուԹիւնը, ասաց մի կցկտուր ձայնով.

— Կարծես ԹԷ Աստուած լսեց քո աղօԹքը։ Հանգստացիր իմ սիրելի։

Այս խօսքերից յետոյ նա հանեց իւր ծոցից

Հէնրիկոսի մոր՝ կոմսուհւոյ պատկերը և ցոյց տալով օրիորդին, հարցրեց.

— ԾանօԹ է քեզ այս տիրուհւոյ պատկերը։

Աւելորդ է այստեղ բացատրել այն ուրախուԹիւնը, որ զգաց մատաղ օրիորդի վշտացեալ սիրտը. նորա երեսի վերայ Թափուեց մի նոր գոյն. նա ուրախուԹիւնից, համարեա ԹԷ, ուշաձնաց եղաւ և հազիւ պահպանելով զգնքը, աղաղակեց.

— Ո՛վ, հրաշափառ Աստուած իմ, այս ո՞ւմ պատկերն է, որ արժանացնում ես ինձ տեսանել... այո՛, այս պատկերը իմ տիրուհի կոմսուհի Էյլիէնֆէյլսի կենդանագիրն է. սա այն բարի տիկինն է, որին իմ փոքրիկ անզգուշուԹիւնը յաւիտեան զրկեց իւր կեանքի միակ մխիԹարիչ Հէնրիկոս որդուց։

Այս խօսքերը նա այնքան կցկտուր ձայնով արտասանեց, որ Հէնրիկոսը վազեց դէպ ի նա, նայեց նորան և վերջապէս ցաւակցարար հարց արեց.

— Ի՞նչու համար է այս քո լացը և արտասուքը... ի՞նչն է քեզ անհանգիստ առնում... Ահա քեզ, իմ սիրելի, տանձ և խնձորներ, ահա՛ վեր ա՛ռ և կեր...

— Նայի՛ր և տե՛ս այս մանուկը, ասաց ծերունի Մէյնրադը։ Սա այն Հէնրիկոս Կոմն է, որին աւազակները կողոպտեցին իւր մանկական օրօրոցից այս պատկերի հետ միասին։

Այս սրբազան խօսքերը կոխեցին մատաղ օրիորդը զմայլմունքի ովկիանոսի մէջ մինչև կոկորդը։ Նա ընկնելով գետնի վերայ, ծունկերի վերայ չոքեց և բարձրացնելով իւր նազուք ձեռքերը դէպ ի երկինք, սկսեց շնորհակալութիւն մատուցանել Արարչին այն շնորհաց համար, որ ցոյց տուեց։ Նորա խօսքերը այս էին։

—Դու, ո՛վ Ամենազօրթ Արարիչ. հասան քո ականջին իմ վերջին աղօթքները. Դու ցամաքացրիր իմ աչքերից այն արտասուքը, որ անկատելի էր մարդոց. Դու ոչնչացրիր այն արտասուաց կաթիլները, որ ողողում էր այս դաշտի ծաղիկները և խոտերը և այս քարաժայռերի կոշտ-կոշտ քարերը։ Այս քո անհուն Ողորմածութեան համար ընդունիր աղաչում եմ իմ խորին շնորհակալութիւնը... այո՛, այն անսպառ շնորհակալութիւնը, որ լեզուն տկար է բացատրել, սակայն Դու ինքդ տեսնում ես նորան։

Յետոյ դառնալով դէպի մանուկ կոմը, գրկեց նորան և ուրախութիւնից արտասուքը խաղացին նորա աչքերում, և հաղիւ արտասանեց այս խօսքերը.

—Իմ սիրելի Հենրիկոս, թող Աստուծոյ նախանամող աջը լինի քո պահապանը։ Աստուած ինքը մեզ խղճալով, դարձեալ քեզ մեզ մօտ ուղարկեց։ Այս իսկապէս դո՛ւ ես, իմ Հենրիկոս։ Արդեօք չեն սխալվում իմ բաղուկներս քեզ գրկելով։

Ո՛հ. քնած եմ թէ արթուն։ Այո՛, այն օրից, երբ աւազակները քեզ յափշտակեցին, ես զրկուած եմ քոյդ սիրելի տեսութիւնից։ Դու բոլորովին քո հօր նմանութիւնն ունիս։ Ո՛հ, որքան ուրախութիւն կը պատճառես քո մօրը քո ներկայութեամբ, ես տկար եմ պատմել այն։

Այս խօսքերից յետոյ Ծերունի ճգնաւորը սրբելով իւր արտասուքը, ասաց.

—Օրհնեա՛լ լինի քո անունը, ո՛վ Արարիչ։ Անսահման է քո զթառատութիւնը... Դու երևոյթապէս հոգացիր այս մանկան կենաց համար... Դու ցամաքացրիր այն անտանելի արտասուքը, որ գիշեր ու ցերեկ թափում էր այս օրիորդը այս ահագին քարաժայռերի կոշտ քարերի վերայ։ Ես շնորհակալ եմ քեզանից, որ յաջողակութեամբ պահեցիր իմ այս առաջին ճանապարհորդութիւնը, ազատելով ինձ աստ-անդ փնտռելուց սորա ծնողքը, որոնք իւրեանց զաւակը մեռեալների և կորուսեալների թւում դասելիս կը լինեն։

Յետոյ Ծերունին, մատաղ օրիորդը և Հենրիկոսը գնացին գիւղացու տունը։

Մանուկը տեսնելով գիւղացոց Ծերունուն ընդառաջ եկած, հարց արեց հետաքրքրութեամբ։

—Այս իմ հա՞յրս է... Այ՞ս է իմ մայրս...

—Ո՛չ, սրելի Հենրիկոս. ասաց Մարգարիտան։

Սոքա չեն քո ծնողքը... ակ երանի թէ ես թէ առնէի և թռչելով ձեր տուն, ուրախացնէի քո մայրը անսպառելի ուրախութեամբ:

—Որքա՞ն լաւի են սոքա, մի՞թէ իմ ծնողքը առելի գգուելու և սիրելու են ինձ... ես մեծաւ ուրախութեամբ կը մնայի սոցա մօտ:

Նախաճաշելուց յետոյ այն փոքրիկ հովուի առաջնորդութիւնով, որին պատահել էր Հէնրիկոսը աւազակների քարայրից դուրս եկած ժամանակը, մեր ուղղեկից հերոսները Մարգարիտայի հետ միասին շարունակեցին իւրեանց ճանապարհը: Արդէն մթնել էր, երբ նոքա հասան այն մեծ ու գեղեցիկ հովտին, որոյ մէջտեղում կառուցուած էր հոյակապ տներով զարդարուած մի գիւղ: Այստեղ օթևանեցին նոքա և միւս օրը շատ վաղ նստելով գիւղական կառքը շարունակեցին իւրեանց ճանապարհը, յուսալով երեք օրից յետոյ լինել Էյլսէնֆէյլսում:

ԺԲ:

ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՏԱՀՄՈՒՆՔ

Ճանապարհորդութեան առաջին օրը շատ ուրախալի էր Հէնրիկոսի համար: Կառքի զանգերի ձայները, ուղիղ ճանապարհը և նորա վերայ պատահող

տները ու գիւղերը գրաւում էին նորա ուշք ու միտքը: Նա այնքան փափագում էր տեսնել իւր սիրելի մայրը, որ հեռու տեղում մի տուն տեսնելիս, առանց մոռացութեան տալու հարցնում էր.

—Արդեօք այս չէ՞ մեր ամրոցը:

Այսպէս առաջին օրը լաւ անցաւ. իսկ երկրորդ աւուր ճանապարհորդութիւնը պատկեց նոցա ճակատը մի անակնկալ ուրախ պատահմամբ: Երեկոյեան ժամանակը մեր ճանապարհորդների ճանապարհը անտառի միջով էր, որոյ նեղ ուղիները ճահճոտ տեղերով էին: Շտապել նոցա անկարելի էր, նոքա կամաց կամաց քշում էին ձիաները: Յանկարծ, կարծես, երկինքն ու երկիրը իրար դիպան, բարձրացաւ մի սաստիկ քամի և սկսեց տեղալ խոշոր անձրևը: Ճանապարհորդութիւն շարունակելը անհնար էր: Նոքա ակամայից ստիպեալ ծռեցին իւրեանց ճանապարհը դէպ ի այն փոքրիկ հիւրանոցը, որ գտնվում էր միայնակ անտառի մէջտեղում: Զը նայելով, որ նոցա հաւատացնում էին նորա մէջ ստէպ պատահող դողութիւնքը և կողոպտումները, նոքա չը վախեցան այնտեղ լիջևանել և գիշեր անցուցանել: Մի փոքր ընթրելուց յետոյ նոքա քնեցին, որ միւս օրը վաղ ճանապարհ ընկնեն դէպի ամրոցը:

Քունը իւր մեղմ ու անգորրիչ բազուկները շուտով տարածեց նոցա վերայ, վասն զի նոքա թր-

ջուած էին անձրևից և ջարդուած էին երկար ճա-
նապարհորդելուց:

Նոցանից մէկի աչքերից միայն քունը հեռու
էր փախած, նա չոքած հէնրիկոսի անկողնոյ մօտ
ջերմեռանդութեամբ և սիրով նուիրում էր իւր ա-
ղօթքը բարձրեալ Աստուծուն: Այս միակ անքուն
աչքերով հսկողը և աղօթողը Ծերունի բարեսիրտ
ճգնաւորն էր:

Յանկարծ կարծես, որոտ ու կայծակ իրեար
խառնուեցին... հիւրանոցի դռները սկսուեցան բաղ-
խուել սաստկագին, լուսամուտները կոտրտուելու վե-
րայ էին արդէն, դուրսը բարձրացաւ մի ուժգին ա-
ղաղակ և խառն 'ի խուռն կոպիտ ձայներ: Հիւրա-
նոցի բնակիչներին տիրեց սարսափ, նոցա մարմինը
ոտքից ցգլուխ դող ընկաւ:

Մարգարիտան, որ հաղիւ գտել էր հէնրիկոսին,
կարծես կրակ էր թափում իւր աչքերից, նա աղա-
ղակեց ցաւակցաբար, նայելով Ծերունուն:

—Տէր իմ, ո՜հ, դարձեալ եկան աւազակները
յափշտակելու իմ հէնրիկոսը, ո՜հ, նոքա հասկացան
նորա այստեղ լինելը, կորաւ իմ ուրախութիւնը...
այո՛, կորան իմ յոյսերը...

Տանուտէրքը ևս շատ վախենում էին, կար-
ծես թէ երկնքից մի ահագին քար ընկաւ նոցա
գլխին...նոքա այնպէս գունատուեցան որպէս մի ան-

շունչ դիակ...իսկ Մարգարիտան դողում և երեր-
վում էր այն աշնան տերևների նման, որոնց անդա-
դար տարուբերում է քամին: Ծերունի Մէյնրադը
թէև հանդարտացնում էր նոցա, սակայն դրսևի
ձայները աւելի ու աւելի սատկանում էին և սպառ-
նում էին կոտրել սենեակների դռները և մտնել ներս:

Այս հանդամանքները տեսնելով, քաջալերեց
իւր անձը Ծերունին, և հանդարտ կերպով ասաց
նոցա.

—Սիրելիք, այս փակ դռները մեզ չեն կարող
պահպանել, սակայն Նախախնամութիւնը իւր ա-
բարածները կը պահպանէ յաւիտեան: Թողէք, տես-
նենք, չէ՞ կարելի արդեօք սիրով խնդրել այս մար-
դոց հեռանալ այստեղից:

Ասաց այս խօսքերը և այն սրատես արծուի
նման, որ հաւաքում է իւր ոյժը մի ահագին որս
տեսածին պէս, քաջալերեց զինքը և բացեց հիւրա-
նոցի դռները, ուր ներս մտան չորս զրահաւորուած
զինուորներ, որոնցից մէկը բռնած ունէր իւր ձեռ-
քում մի վառ ճրագ:

—Մեզ հարկաւոր են բոլոր սենեակները, ա-
ղաղակեցին ամենքը միասին. այս րոպէիս գալու է
այստեղ օթևանելու մեր պարոնը իւր ընկերներով:
Այստեղ դուք պիտի պատրաստութիւնք տեսնէք
նոցա ընդունելութեան համար:

—Իսկ ո՞վ է ձեր պարոնը, հարցրեց ճգնաւորը:

—Կոմս Ֆրիդրիկոս Էյլսէնֆէյլսը, պատասխանեցին նոքա:

Ծերունին շատ զարմացաւ լսելով Հէնրիկոսի հօր անունը: Զինուորները դարձեալ աւելացրին իւրեանց ասածների վերայ և այս, թէ՝ կոմը իւր վերքերից առողջանալով, կրկին չը կամեցաւ թողնել պատերազմի դաշտը և թշնամեաց հետ կռուեց մինչև այն ժամանակ, երբ ինքնեանք թշնամիք խնդրեցին խաղաղութիւն: Վերջապէս նոքա կապեցին խաղաղութեան դաշն և կոմը իւր ծառաներով այժմ վերադառնում է տուն:

Խաղաղութիւն անունը այն տան բոլոր բնակիչներին ուրախացրեց: Նոցանից իւրաքանչիւրը աշխատում էր կարողացածին չափ ցոյց տալ իւր ծառայութիւնը Հայրենեաց քաջ պահապաններին: Զինուորները և տեսնելով նոցա հիւրասիրութիւնը, նեղողութիւն խնդրեցին իւրեանց անմարդավայել վարմունքի համար, որ յառաջացել էր եղանակի վատ լինելու պատճառից:

—Ի հարկէ կարելի է ներել այն զինուորների անհամբերութեանը, որոնք ոտքից ցգլուխ թրջուել են սաստիկ անձրևից անտառի մէջ, երբ նոցա վիճակվում է երկար սպասել կողպած դռների առաջև մրրիկ ժամանակ:

—Զինուորները շարունակեցին խօսել այսպէս.

Մենք ևս կորցնելով մեր ճանապարհը անտառի մէջ, միայն մի փոքրիկ երևցող լուսով կարողացանք գտնել այս հիւրանոցը...այո՛, մեզ առաջնորդ դարձաւ միայն այս փոքրիկ պատուհանից ցայտուող լոյսը, ապա թէ ոչ մենք այժմ կորած կը լինէինք:

Անկարագրելի է, թէ՝ որքա՛ն զարմացաւ ճգնաւորը, տեսնելով հանգամանքի այսպիսի հիանալի և հրաշալի բերմունքը: Այն լուսատու ճրագը, որ վառել էր ճգնաւորը իւր աղօթքն անելու համար, իւր գիշերային մաղթանքը Արարչին մատուցանելու համար, առաջնորդեց կոմս Ֆրիդրիկոսին դէպի այն խուցը, ուր գտնվում էր նորա սիրասուն որդի Հէնրիկոսը: Այս պատահմունքի մէջ բարեհոգի պատկառելի ճգնաւոր ծերունին պարզապէս տեսնում էր նախախնամութեան անպարագրելի ողորմածութիւնը, Ամենակարողութիւնը, Նախախնամութեան Ամենուրեք լինելը և նորա Սուրբ ու Ամենիմաստ կամքը:

ԺԳ.

ԲԱՐԻ ՀՕՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՆԸ:

Զ'անցաւ մի քանի րոպէ, ահա կոմը ներս մտաւ սենեակը: Նորա երեսի վերայ փայլում էր աղնու-

ութիւնը: Նա մի քաջ երկայնահասակ մարդ էր և աղնիւ բնաւորութեան տէր:

Ճգնաւորին տեսնելով, քաղաքավարութիւնով և յարգանքով ընդառաջ եկաւ Նորան, վասն զի առաջուց ևս ճանաչում էր Նորա բարեհոգի և բարեսիրտ լինելը: Խոնարհաբար խնդրեց մտնել իւր սենեակը, առաջարկեց Նորան նստել և հրամայեց ծառային գինի բերել: Նա յարգանքով մատուցանելով ծերունւոյն մի բաժակ գինի և ընդունելով Նորա օրհնութիւնը, ինքը ևս խմեց Նորա կենաց բարեմաղթութեան քաղցրիկ բաժակը:

—Այո՛, երկար ճանապարհորդութիւնը շատ ահալի է այսպիսի մրրկալից և անձրևային եղանակին...ես շատ գոհ եմ, որ կարողանում եմ այժմ տաք և ապահով բնակարանում հանգստանալ: Ցարգելի ծերունի, ընդունի՛ր, իմ սիրով քեզ ողջունելը: Ինձ դժուար է լեզուով յայտնի կացուցանել այն ամեն ուրախութիւնը, որ կայ սրտիս մէջ, երբ այսաեղ ներկայ տեսնում եմ Քեզ: Քեր երեսի վերայ փայլող ճշմարտութիւն և աստուածպաշտութիւնը յարգել է տալիս ամենեցուն Քեր պաշտելի անձնաւորութիւնը. ուրեմն ներեցէք, ծերունի հայր իմ, մի փոքր բացարձակ խօսելու Քեզ հետ: Ահա դուք տեսնում էք, որ մենք վերադառնում ենք պատերազմի դաշտից, իմ ծառաներս բոլորեքեան ուրախ են.

միայն ինձանից է, որ տրտմութիւնը իւր մռայլապատ մտքերը հեռու չէ կացուցանում: Մի նախազգացմունք կարծես կրծոտում և մաշում է իմ սիրտը: Ո՜հ, ես սարսափում եմ տուն վերադառնալու. իմ միակ որդի Հէնրիկոսը, որոյ համար ոչինչ մի հաստատ լուր չէ հասնում ականջիս, յարուցանում է իմ մէջ մի տխուր և տրտում նախազգացմունք: Ա՛խ, Ամենաբարի Աստուած իմ, մաշվում և խոցոտվում է իմ սիրտը, երբ ես իւրաքանչիւր անգամ կարդում եմ կոմսուհւոյ ինձ ուղարկած վերջին նամակը, որ սարսափեցնում է ինձ և դերեզմանի սարսեցուցիչ դրունքը բացում է իմ առաջիս: Նա ինձ գրում է այն նամակի մէջ թէ՝ Հէնրիկոսը յաւիտեան փախաւ և Նորան այլևս իմ կեանքի մէջ չեմ կարող տեսնել: Այն օրից ես այն նամակը իմ կրծքի վերայ դրած ձայն եմ տալիս մահուանը, բայց այն անգութը ինձ չէ մօտենում, այլ ընդհակառակն հեռանում է ինձանից: Ի՜սէր Աստուծոյ, Հայր Մէյնրադ, գիտեմ, դուք ճանաչում էք բոլոր աղնուազարմ պալատականներին և քաջազանց շատերին, որովհետև ժամանակով եղել էք մի բարեծնունդ զինուոր. և այժմ յաճախակի ճանապարհորդութիւններ էք անում ամեն տեղ...աղաչում եմ, ասացէք խնդրեմ, արդեօք այն ի՞նչ անբաղդութիւն է, որ պատահել է մեր ամրոցում:

—Փարատեցէք Ձեր տրտմութիւնը Կոմս, ես կարող եմ լաւ տեղեկութիւնք հաղորդել Ձեզ Ձեր որդւոյ մասին, ասաց ուրախալի դէմքով Ծերունի Ճգնաւորը: Ձեր որդւոյ տխուր լուրը, գիտեմ, մոռանալ է անում Ձեզ, սակայն ի զուր է այդ մոռանալ լինելը, նա բոլորովին առողջ է և անվտանգ:

Կոմսը բոլորովին այլայլեցաւ, չը գիտէր թէ՝ ինչ ասէր, նա աղաղակեց անհամբերութեամբ:

—Ուրեմն դուք ճանաչո՞ւմ էք նորան:...

—Ես նորան շատ լաւ եմ ճանաչում, պատասխանեց Ծերունին:

—Թողէք ինձ պատմելու այն անբաղդութիւնը, որ պատահեցան Ձեր ընտանեաց հետ Ձեր ուղղութիւնից յետոյ:

Ճգնաւորը պատմեց Կոմին բոլոր պատահմունքը, որ անցել էր փոքրիկ Կոմի կլխով: Բայց իւր պատմութեան ստուգութիւնը աւելի ճշմարիտ կացուցանելու համար, նա հանեց Կոմուհւոյ պատկերը իւր գրպանից և քաղաքավարութեամբ տուեց Կոմ Ֆրիդրիկոսին:

—Այո՛, այո՛... այս նա է, բացագանչեց Կոմսը... Ես հաւատի եմ, որ այժմ իմ աչքերը տեսնում են իմ ամուսնոյ պատկերը, սակայն ցաւը և դառն կսկիծը այժմ բոլորովին փոխարկած կը լինի նորա դէմքի գծագրութիւնը: Բայց, ասա՛, խնդրեմ, ո՞ւր է իմ Հէնրիկոսը:

—Ա՛հա նա այստեղ մեզանից հեռու չէ:...

—Ո՞ւր է, ո՞ւր... ասացէք, խնդրեմ. աղաղակեց Կոմսը վերկենալով իւր տեղից: Ա՛խ, ի՞նչու դուք վաղուց չէիք ասում ինձ նորա այստեղ լինելը... խնդրեմ, տարէք ինձ շուտով իմ որդւոյս մօտ:

Այստեղ արդէն մի երկնային ուրախութիւն տիրեց Կոմին, երբ Ծերունի Մէյնրադը տարաւ նորան Հէնրիկոսի մահճակալի մօտ: Մորփէն *) իւր քնոյ անմեղ սերմունքը թափել էր մանկան վերայ... նա այնքան դեղեցիկ և սիրելի դէմք էր ստացել, որ կարելի էր ընդունել հրեշտակի փոխանակ: Հայրը չէր կշտանում նորան երկար նայելուց:

Տեսնելով մանկան այսպիսի դեղեցիկ քնքշութիւնը, լցուեցան Կոմսի աչքերը արտասուքով. նա բարձրացնելով իւր հայեացքը երկնքին, բացագանչեց հիացմամբ.

—Ո՛վ երկնքի և երկրի Ստեղծող, ես հիանում ու զարմանում եմ քո ողորմութիւնները տեսնելով: Ա՛խ, այս որքան քնքշութիւն է փայլում հրեշտականման որդւոյս երեսի վերայ: Ես պատերազմի դաշտը դիմելուս և վերջին հրաժարական համբոյրս տալու ժամանակ նա մի փոքրիկ ծծի երեխայ էր, իսկ այժմ, փառք Քոյդ բարերարութեանը, բաւական մեծացել է և կարողանում է խօսել: Ո՛հ, իմ հոգւոյս

*) Քնոյ աստուածն էր։

հատոր Ադելայիդայ... այժմ... այո՛, այժմ միայն ես հասկանում եմ քո նամակների զօրութիւնը... ես զգում եմ, թէ ինչ զգուշութեամբ շարժում էիր դու քո գրչի ծայրը ինձ յուսահատութեան ովկիանոսը չը ձգելու համար: Ա՛խ, Հէնրիկոս, դու իմ սիրելի Հէնրիկոս. աղաղակեց նա բարձր ձայնով և գրկելով նորան... զարթիր խոր ու քաղցր քնից. տե՛ս ինձ, քո հօրը, որ բաւական ժամանակ հեռացել էր քեզանից և դու ընկել էիր այսպիսի մի անտանելի փորձութեան մէջ:

Այս միջոցին զարթեցաւ Հէնրիկոսը և զարմացած նայում էր Կոմսին, տրորելով աչքերը: Նա չէր հասկանում երազումն է, թէ արթուն: Վերջապէս նա ասաց ուրախ ժպիտով:

—Այս դո՞ւ ես իմ հայր, Աստուծոյ օրհնութիւնարեր աջը թող լինի քո վերայ... բայց ասա՛, խնդրեմ, մայրս ևս քո հետ է:...

Կոմսը կարծես մի ուրիշ աշխարհ թռաւ... նա բռնեց մանուկը իւր ձեռքերի վերայ և արտասանեց.

—Սիրելի որդեակ իմ, Աստուծոյ նախախնամութիւնը ազատեց քեզ այն սարսափելի վտանգից, որոյ մէջ գտնվում էիր դու: Նա քեզ դարձրեց դարձեալ իմ ձեռքը: Ո՛հ, չեմ կարող յայտնել լեզուով այն շնորհակալութիւնը, որ զգում է իմ սիրտը:

—Իմ սիրելի հայր, ես նոյնպէս տկար եմ բա-

ռերովս սրտիս զգացմունքը յայտնի կացուցանել Ա-րարչին: Նա մեզ այսքան ուրախացրեց, մեր սրտի տրտմութիւնը և դառն վշտերը փարատեց, ես դժուարանում եմ ներկայացնել աչքիս առաջևը այն սահմանը, թէ որքան ողորմած և մարդասէր է Նա:

Հէնրիկոսի խօսակցութիւնը, որդիական պարտականութիւն հասկանալը և արդարացի ու բանականաբար պատասխանատուութիւնը հիացրեցին ու ապուշ դարձրին Կոմս Ֆրիդրիկոսին: Նա բռնելով ծերունուոյ ձեռքը, ասաց.

—Ո՛հ, ամենապատուական Մէյնրադ հայր իմ, ես բոլորովին երախտապարտ եմ Ձեր առաջև, դժուար է ինձ որոշել, թէ որքան Դուք պարտաւորեցրիք ինձ: Իմ բոլոր հարստութիւնքը չեն կարող լինել Ձեր համար մի արժանաւոր վարձ այն բարերարութեանց, որ Դուք արել էք իմ որդւոյս համար... Ես երբէք Ձեր բարեգործութիւնը չեմ մոռանալ, նա կը մնայ անջնջելի դրոշմուած իմ սրտիս մէջ մինչև այն օրը, երբ Աստուծոյ հրեշտակը կը հրաւիրէ ինձ դէպի յաւիտենականութեան օթևանը, դէպի մեր ամենիս ճակատագրական գերեզմանի դուռը:

Այս խօսելու ժամանակ Մարգարիտան սենեկի դռների մօտ կանգնած էր և չէր համարձակվում ներս մտնել: Կոմսը, տեսնելով նորան, մեծահոգութեամբ ողջունեց և ամեն կերպ աշխատում էր քաջալերել նորան:

—Իսկ աւազակները կը կրեն իւրեանց արժանի պատիժը, ասաց բարկութեամբ Կոմը: Այս ասելով խսկոյն և եթ հրամայեց իւր քաջ զինուորներին, շուտափոյթ երթալ և որոնել աւազակների խումբը, և բերել իւր ամրոցը: Հայր ու որդի չ'էին կշտանում զրուցելուց և անշուշտ ամբողջ գիշեր կը մնային անքուն, եթէ Ծերունի Մէյնրադը չը խնդրէր նոցա հանգստանալու:

ԺԴ.

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԳՏՆՕՂ ՄԱՅՐԸ:

Այն օրից, երբ աւազակները յափշտակել էին Հէնրիկոս Կոմսը, Կոմսուհի Աղէքսանդրի երեսին չ'էր փայլել մի ուրախութեան ժպիտ, նորա երեսի գծագրութիւնը բոլորովին փոխուել էր անդադար լալուց: Նա մնում էր միշտ տխուր ու տրտում տանը նստած, առանց դուրս գնալու իւր ամրոցէն մի տեղ: Կոմսուհին լսելով պատերազմի դադարելը և խաղաղութիւնը, արդէն մտածում էր նա Կոմսի դարձը, և նորա ցաւերը կրկնապատկուում էին:

—Հասարակ զինուորը վերադառնալիս, ասում էր նա յուսաբեկ, ուրախանում է նորա կինը կամ մայրը...իսկ այժմ վայ իմ օրերիս, ես սարսափում եմ տեսնել իմ ամուսին Կոմս Ֆրիդրիկոսը... Այն լուրը, որ իւրաքանչիւրին ուրախութիւն է պատճառում, վերդովում է իմ հոգին և սիրտը տխուր դաղափարներով: Ո՜հ, որքան յուսահատութիւն կը պատճառէ նորան Հէնրիկոսի բացակայութիւնը. և ի՞նչ եղանակով պիտի հասկացնեմ նորան Հէնրիկոսին պատահած ցաւալի պատմութիւնը... Արարիչ իմ, ես պարզ տեսնում եմ, որ այսուհետև աշխարհը ոչ իմ համար և ոչ Կոմսի համար լինելու չէ խաղաղութեան ապաստան և երջանկութեան օթեան:

Այսպիսի նորա սրտամաշ խոր հրդածութիւնները անդադար անհանգիստ էին առնում նորան: Նա վազում էր սենեկէ սենեակ, գնում էր այդին և կրկին վերադառնալով թադուցանում էր իւր անձը ամրոցի ներքնասենեակներում:

Գիշեր ու ցերեկ կոծում էր և ձայն էր տալիս մահուան, սակայն անգութ մահը անողորմ էր դէպ 'ի նա...Միայն աղօթքը և ջերմեռանդ հաւատքը հանգստացնում էին նորան և յուսադրում էին մի բաղդաւորութեան...

Մի ձայն կարծես հնչվում էր նորա սրտի մէջ և աղդում էր նորան այս ճշմարտութիւնը, թէ՝ Աստուած ողորմած է, նա շատ անգամ մարդուս անբաղդութիւնքը բաղդաւորութեան է փոխարկում:

Ո՜հ, այն ի՜նչ տեսարան էր, երբ մի օր նա առանձնանալով պարտիզի ստուերապատ անկիւնում, ուր ոչ ոք չէր տեսնում նորան բացի ոսկի արեգակը, ծունկ չոքեց և բաւական լալուց յետոյ կցկտուր ձայնով, բացագանչեց.

Գեղեցիկ աշխարհ, համայն տիեզերք,
Դարձան իմ համար բանտ, սպանդարան.
Այլ չը կայ ոչինչ սրտիս մխիթար,
Սպասում եմ ես քեզ, քաղցրիկ գերեզման:

Ի՞նչու շնորհաշուք սօսափումէք Դուք
Իմ ուրախութեան յիշատակ սօսիք.
Ի՞նչու էք այդպէս կանաչազգեստուել
Իմն բերկութեան, սրբազան տեղիք:

Ա՛խ, դադարեցէք սիրուն թռչնիկներ,
Թողէք ձեր անմեղ մեղեդիք, երգեր.
Տխուր ովկիանի տարածութեան մէջ
Ընկղմուել եմ ես: Օգնի՛ր ինձ, ով Տէր:

Լռի՛ր և դու ևս, ով սիրուն առուակ,
Այլ սիրելի չեն ինձ քո կարկաչմունք...
Ա՛խ, իմ Հէնրիկոս, իմ սիրտ, իմ հոգի...
Գնացիր... տարար իմ ոյժ զգացմունք:...

Զ'ունիմ քեզնից յետ ես հանգիստ դադար,
Օր ու տարիներ սուգ են իմ համար.
Որպէս մի ընկեր կորուսած տատրակ
Անիծումեմ կեանքս տխուր—միայնակ:

Ասա՛ ինձ, լուսի՛ն, երկնից թագուհի,
Զը տեսա՞ր արդեօք զիմ մանկան երես.
Հնչեր ով զեփիւռ, հնչեր մեղմաձայն,
Տա՛ր Հէնրիկոսին համբոյրս մայրական:...

Ամբողջ բնութիւն իւր զարդարանքով
Դարձաւ իմ համար միայն տրտմութիւն.
Ա՛խ, ո՞ւր ես դու, ո՞ւր. որդեակ Հէնրիկոս,
Սնումէ մեռնել ինձ, տալով քո անուն:

Սակայն դու հեռու... աւազակաց մէջ...
Զը պիտի ողբաս իմ անշունչ դիակ.
Զը պիտի ածես ինձ մի բուռն հող,
Որ քնեմ հանգիստ ծանր քարի տակ:...

Այս խօսքերը արտասանելուց յետոյ նա բոլորովին ուշաթափ եղաւ, բայց մի փոքր ժամանակից յետոյ նա ուշքի գալով, բարձրացրեց իւր ձեռքերը դէպի երկինք և սկսեց աղօթել այսպէս.

—Ողորմի՛ր ինձ, ով Ամենաբարի Աստուած. վերջացրո՛ւ, խնդրումեմ, այս իմ երկար չարչարանաց բաժակը: Դու ես միայն Ամենակարող, օրհնի՛ր այն բոպէները, որ պիտի պատահեմ ես իմ կոմս Ֆրիդրիկոսի հետ: Ես հասկանումեմ, որ այդ քո սուրբ կամքն է, որ այսքան ժամանակ իրեարից հեռացած են հայրը, որդին և մայրը: Դու միայն կարող ես Հէնրիկոսին դարձնել մեզ, այո՛, նորան, որուն սիրում եմ իմ կեանքից առաւել: Դու անսահման

Ողորմած ես և միայն Քո Ամենակարողութիւնն է, որ ամեն անբաղդութիւն փոխում է բաղդաւորութեան: Որքան և մեծ լինեն իմ յանցանքը, բարերար Աստուած իմ, գիտեմ որ ողորմած ես և կը ներես ինձ, վասն զի ես քո անարժան որդին եմ: Այո՛, Քո միածին Որդի Յիսուս Քրիստոսը մեզ սովորացրեց Քեզ Հայր կոչելու և մեր յոյսը Քո վերայ դնելու: Քո սէրը դէպի մեզ աւելի մեծ է և անսահման, քան թէ այն սէրը, որ ես ունիմ դէպի իմ սիրելի Հէնրիկոսը: Ունկնդիր եղիր իմ աղօթքներին և մի՛ անտես առներ այն պաղատանքը, որ թեւ առած թռչում են Քո անաչառութեան առաջև:

Մարգարիտան, որ եկել էր մեր ճանապարհորդների հետ ամրոցը, մտաւ այգին և ծառերի ճեմելիքի միջով անցաւ դէպի այն տեղը, ուր գտնվում էր Կոմսուհին և ծունկ չոքած ջերմեռանդութիւնով շարունակում էր իւր աղօթքը:

Վերջացնելով իւր աղօթքը, Ադէլայիդան լսեց մի ոտքի ձայն ծառերի միջից, նա յետ նայելով տեսաւ մատաղ օրիորդին:

Կարծես երկնքից մի հրեշտակ եկաւ նորան աւետիս տալու Հէնրիկոսի գտնուելու լուրը: Նա խնդոյն ճանաչեց իւր որդւոյ պարկեշտասուն դայեակը և տեսնելով նորա երեսի վերայ փայլող ուրախութիւնը, արդէն զգաց իւր յոյսերի Ի կատար դալը:

Մարգարիտան, որ վաղուց արդէն չէր տեսել Կոմսուհի Ադէլայիդային, ընկաւ նորա ոտքերը և աղաղակեց ուրախութեամբ.

—Ցնծա՛ այժմ, իմ տիրուհի՛ և քո հոգւոյ յուզմունքը դադարեցրու բոլորովին: Ես բերել եմ նոր և ուրախալի լուր քո Հէնրիկոսից: Նա բոլորովին առողջ է և այս րոպէիս կը տեսնէք նորան:

Ուրախութիւնը և զարմանքը միախառն ազդելով Կոմսուհւոյ վերայ, բոլորովին այլայլեցաւ: Նա կամենում էր խօսել, բայց, կարծես, մի դիւթական զօրութիւն կապել էր նորա լեզուն և չէր թոյլատրում արտասանելու ոչ մի բառ: Նա քարացածի նման անդադար նայում էր Մարգարիտայի վերայ: Կոմսուհին մինչդեռ այսպիսի հիացման մէջ էր, եկաւ ահա և ծերունի Մէյնրադը և ամեն կերպով աշխատում էր, որքան կարելի էր, զգուշութիւնով յայտնելու նորան իւր որդւոյ և ամուսնոյ գալուստը:

Հիացած Կոմսուհին տեսնելով ճգնաւորին, ընդառաջ եկաւ և շնորհակալութեամբ համբուրեց նորա ձեռքը: Նա լաւ չիմանալով գործի էութիւնը, խնդրեց ծերունուն իւր հետ դնալ ամրոցը և երկար ճանապարհորդութիւնից հանդիստ գտնել:

Բայց որքան բաղդաւորութիւն և փառք պատկեցին նորա ճակատը, երբ նա բանալով սենեկի դուռը, տեսաւ յանկարծ այնտեղ նստած Կոմսին բռ-

նած իւր ձեռքում իւր ամենասիրելի զաւակ Հէնրիկոսը։

Նորա բոլոր մարմնի վերայ ահ ընկաւ և յափշտակուած մտքով բացագանչեց.

— Ո՜հ, այս ո՞ւմն եմ տեսնում... իմ Կոմս Ֆրիդրիկոսը... իմ ամենասիրելի Հէնրիկոսը...

Հազիւ արտասանեց Կոմսուհին այս խօսքերը... Նորա ծնկերը թուլացան և նա անշուշտ կ'ընկնէր գետնի վերայ և կ'անշնչանար ուրախութիւնից, եթէ այն րոպէին Կոմսը չը բռնէր Նորան և չը գրկէր իւր սրտի ուրախութեան էակներին։

Կոմսուհին չափազանց ուրախութիւնից երկար չը կարողացաւ ոչ մի բառ արտասանել, միայն իւր արտասուքով ողողում էր Կոմսի և Հէնրիկոսի ձակատը. բայց յետոյ փոքր առ փոքր ուշքի գալով, քաջալերեց ինքը իրան և ասաց այս խօսքերը.

— Իմ խաղաղացուցիչ հրեշտակ Ֆրիդրիկոս, կարո՞ղ եմ արդեօք ես պատմել այն վիշտը, որ անդադար կրծոտում էր իմ հոգին... Ես սարսափում էի քո գալուստը լսել, վասն զի ես Հէնրիկոսը յաւիտեան կորած էի կարծում, սակայն փա՜ռք Ամենակարող Աստուծուն, որ նա դարձրեց Նորան դարձեալ իմ գիրկը։ Այժմ ես կարող եմ մեռանել, այսուհետև կեանքը ինձ բնաւ հարկաւոր չէ, վասն զի այնպիսի բոպէներ, որ այսուհետև ես անցուցանելու

եմ, շատ եմ վայելել իմ կեանքիս գարնան հասակում։ Ո՜հ, որքա՜ն անաչառ է Քոյդ դատաստանը, Ամենիմաստ Նախախնամութիւն։ Ես իմ կեանքիս բոլոր օրերում չ'եմ մոռանալ բնաւին փառաբանել Քո Սուրբ անունը, Արարիչ Ստեղծողդ իմ։ Այսուհետև ինչ ամենաահեղ նեղութեանց մէջ էլ որ լինեմ, չեմ վհատուելու երբէք։ Իմ յոյսը, իմ միակ ապրելութիւնը կը լինի միայն Քո վերայ, վասն զի կարող ես ամեն ցաւ ու տրտմութիւն ուրախութեան փոխարկել։

Այս դառնալով դէպի Հէնրիկոսը, համբուրեց Նորա ձակատը, և մայրական կարօտով ասաց.

— Իսկ դու, իմ սիրելի Հէնրիկո՛ս, բաւական մեծացել ես այժմ։ Ո՜հ, ես շատ ուրախ եմ քո տեսութեանը։ Ա՜խ Ֆրիդրիկո՛ս... այս ինչ քաղցրալի բոպէներ են, որոնց դու արժանացրիր իմ անձը։ Այո՛, ես այժմ հասկանում եմ, որ Տէրը այսպէս էր կամենում, այսպէս էր Նորա սուրբ կամքը։ Թէև Նա մեզ բաժանեց, սակայն իւր մարգասիրութիւնով դարձեալ միացրեց մեզ։ Ուրեմն օրհնենք և փառաբանենք միշտ Նորա ողորմած անունը մեր աղօթքներով և բարեգործութիւններով։

Ծունկ չոքելով Կոմսը, Կոմսուհին, մատաղ Հէնրիկոսը և նոցա հետ ևս Մարգարիտան և Մէյնրադ ծերունին, փսեցին աղօթել առ Աստուած։ Բո-

լորն էլ եռանդով և վառ սիրով էին մատուցանում իւրեանց աղօթքը, իսկ Մէյնրադի աչքերից արտասուքը բնաւ դադար չէին առնում յորդ բղխելուց:

Այսպիսի երկնային ուրախութիւնից յետոյ Հէնրիկոսը նստելով իւր մօր մօտ, պատմեց իւր պատմութիւնը թէ՝ ինչպէս բանտարկուած էր աւազակաց քարայրում: Նորա պատմութիւնը այնքան փրկիչ էր, որ կոմուհին նորա պատմելու ժամանակը երբեմն ուրախանում էր: Հէնրիկոսը ոգևորվում էր այն պատմութեան ժամանակ, երբ նա աւազակների քարայրի մէջ դտնուած ստորերկրեայ անցքերից մէկի մէջ մտնելով, երկար նեղութիւնից յետոյ դուրս եկաւ վերջապէս լոյս աշխարհ... Մանաւանդ նորա հոգին զմայլում էր նկարագրելով այն սրբազան րոպէն, երբ ճգնաւորը խօսում էր նորա հետ Աստուծոյ Ամենակարող լինելու վերայ, սովորացնում էր ճանաչել յաւիտեան նորան և սիրել մեր ամենիս Ստեղծողին: Այս ամենը, երբ պատմում էր հանուկը, նորա աչքերից արտասուքի կաթիլները ոլոր-մոլոր թափվում էին նորա դեղափայլ թշերի վրայ:

—Աւփսոսում եմ ինձ, որ ես էս իմ մանկութեան օրօրոցը չեմ դարձրել այնպիսի քարայրները, ասաց հառաչելով Կոմս Ֆրիդրիկոսը Բնութեան հետազօտութիւնը առաջնորդում է Ձեզ լաւ ծանօթանալ նորա դեղեցկութեանց հետ. բայց փափ-

կութիւնով տանը հանդարտ նստելը, ոչնչացնում և չքացնում է մարդուց բնութեան այսպիսի ուրախալի դեղեցկութիւնները: Ի՞նչ տպաւորութիւն կարող է ունենալ մեր մէջ բնութիւնը, մինչդեռ մենք ես Հէնրիկոսի նման մանկութեան օրերից չենք քաջ ճանաչել նորան: Այն ժամանակ, ով Ստեղծող Արարիչ, քո ողորմածութիւնը աւելի հրաշալի կը լիներ մեր աչքերի առաջև. այո՛, այն ժամանակ քո Ամենակարողութիւնը աւելի ու աւելի կը հիացնէր և կը բորբոքէր մեզ. նա կը յարուցանէր մեր մէջ մի ճշմարիտ և արդար զմայլմունք: Այն ժամանակ իւրաքանչիւր րոպէներում, երբ կը համբառնանք մեր աչքերը դէպի երկինք, դէպի այն բոլոր առարկայքը, որ ստեղծել ես դու. աւելի կը յիշեցնենք մեր մէջ այն խորին շնորհակալութիւնը, որ արժանի է քոյդ անուանը և ոչինչ բան չէր կարող մեղանից ջնջել այդ ամենը:

—Այն տպաւորութիւնները, որ գործել է աշխարհը Հէնրիկոսի վերայ, ահա տալիս է մեզ երկրաւոր կեանքը թողնելուց յետոյ երկնաւորին դիմելու հասկացողութիւն. ասաց հառաչելով Կոմուհին: Այն ուրախութիւնները, որ տալիս էին Հէնրիկոսին աւազակները և կախարդ կինը այդ մութ քարայրի մէջ, նա բնութեան սքանչելեաց նսեմ ստուերն էր. նոյնպէս և այս անցաւոր աշխարհի բոլոր պատրիչ

բաւականութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի աղօտ ուրուական երկնային անանց, յաւիտենական երջանիկ ուրախութեանց: Ես երևակայում եմ որ երկնային ուրախութեանց վերայ մի որ և իցէ փոքրիկ մեզ հասկացողութիւն տուողը է զգացմունքը: Այնպէս ևս վաղուց չը տեսած սիրելի բարեկամի տխրութիւնը ուրախալի է մարդու համար: Այն բոպէից, երբ մենք ևս միմեանց տեսնուեցանք, այնքան ուրախ եմ համարում եմ անձը, որ երևակայում եմ ինձ փառաց մեր երկնաւոր Հօր գիրկը այն արդարների բնակարանի մէջ, որ պատրաստել է նա իւր սիրելիների համար:

ԺԵ.

ՁԱՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺԸ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ:

Կոմսի զինուորները գործ դնելով իւրեանց ջանքը, յաջողակ կերպով շրջապատեցին բոլոր աւազակներին քարայրի մէջ և մի քանի օրից վերադարձան ամրոցը, բերելով իւրեանց հետ բոլոր աւազակաց խումբը: Նոքա բոլոր աւազակներին շղթայած բերում էին իւրեանց առաջև, իսկ յետևից յետևում էր նոցա այն ահագին բեռն, որ լցրած էր կողոպտած թանկագին բաներով: Այս բոլորը պահապան զինուորի առաջնորդութեանն էր յանձնուած: Թանկագին բաներով լցուած անդուկների մէկի վերայ ևս փառաւորապէս նստեցնել էին այն չար պառաւ կախարդին, որ ամրոցից փախցրել էր Հէնրիկոսին:

Քարայրից Հէնրիկոսի անհետանալը շատ չ'որոնել տուեց աւազակներին: Նոքա մտածելով երկաթեայ դռներին, արդէն միամտեցան որ նա այնտեղից չէ փախել, որովհետև դռները ամուր կողպուած էին: Քարայրի մէջ գտնուած ստորերկրեայ անցքերի ուր տանելը նոցա յայտնի չէր. ուստի և նոքա կարծում էին, թէ Հէնրիկոսը ընկաւ քարայրում սփռուած քարերից մէկի տակ և բոլորովին ջարդ ու փշուր եղաւ: Այն կոյրերը բնաւ չէին հասկանում, որ Նախախնամութիւնը իւր գթութեամբ օգնել էր մանուկ կոմսին:

Նոցա կոյր մտքերը փարատուեցան այն ժամանակ, երբ մտնելով Էյլհէնֆէյլսեան ամրոցը, տեսան Հէնրիկոսին նստած իւր հօր մօտ տան դրան առաջև: Նոքա բոլորովին զարմացան և ոչ մի կերպով չէին կարողանում երևակայել, թէ ինչպէս կարողացաւ նա փախչել նոցանից:

Աւազակապետը բարկանալով ասում էր ինքն իրան.

—Ի զուր մենք կարծում էինք, որ աշխարհի

մէջ մեղանից աւելի խորամանկ և զօրեղ չը կայ. իսկ այժմ ահա այս փոքրիկ մանուկը պատրաստեց մեր ոտքերի համար ծանրաբեռն շղթաներ:

Այն նաժիշտը, որ կոմսուհւոյ բացակայութիւնը յարմար միջոց համարելով եկել էր ամրոցը, և դէպի իրեն էր դրաւել տան բոլոր ծառաների և դայեակ Մարգարիտայի ուշադրութիւնը, նա ևս գտնվում էր այս աւազակաց խմբի մէջ և հաւանութիւն տալով աւազակապետի խօսքերին, ասաց.

—Այս մանուկը ահա մեր բոլորիս կործանիչն է հանդիսանում: Մեր բոլոր նպատակները այլապէս սահմանուեցան... Մենք սորան յափշտակեցինք իւր հայրենական տանից, որ մեր անբաղդութեան ժամանակ սա լինի մեր անձանց աղատութեան գին, իսկ այժմ ամենը ընդհակառակն է կատարվում: Ուրեմն ես այժմ բոլորովին հաւատում եմ այն խօսքերին, որ շատերը հաւաստիաբար խոստովանում են, թէ ամենայն բան, որ չարագործութիւնով է սահմանած, նորա վերջը վատ է և զղջալի:

Նոցա մէջ միայն երիտասարդ Ռիչարդի խելքն էր մաքուր, սա շատ սիրում էր Հէնրիկոսը և միշտ քարայրում մխիթարում էր նորան... իսկ այժմ նա լինելով շղթացած Հէնրիկոսի առջև, մտածում էր ինքն իրան.

—Թէև այս մանուկը իմ մահուան դատակնիք

տուողն է, այնու ամենայնիւ ես ուրախ եմ, որ Ամենակարող Աստուածը օգնել է սորան մեր բնակարանից փախչելու և իւր ողորմածութիւնով դարձրել է սորան իւր ծնողների խանդակաթ գիրկը: Այս բանում Աստուած պարզապէս ցոյց է տալիս իւր Ամենակարող լինելը, աղատ կացուցանելով նա արդարների կեանքը և ստրկացնելով ու պատժելով յանցաւորները: Ա՛խ, իմ սիրելի մեր տասած խօսքերը, որ իսկապէս մեղ էր վերաբերում, այժմ տեսնում եմ բոլորը կատարուած: Ես հասկանում եմ այժմ, որ ծնողքը իւրեանց որդւոց բարւոք և բաղդաւոր լինելն են ցանկանում: Մօրս խօսքերը դեռ անմոռաց են սրտիս մէջ, նա ասում էր. «չարագործները երբէք «անպատիժ չեն մնալ, նոքա Աստուծոյ ձեռքից չեն «կարող աղատուել, եթէ մինչև անգամ թագու«ցանէին իւրեանց անձը գետնի ամենախոր և անմարդաբնակ տեղերում: Այնտեղ ևս կը գտնէ նոցա «Աստուծոյ ահեղ և անաչառ դատաստանը և կար«ժանացնէ այն պատժաբեր շանթերին, որոնց ար«ժանի են նոքա իւրեանց գործով»:

Հէնրիկոսի գուխը շարժեցաւ, երբ նա տեսաւ այն երիտասարդ Ռիչարդին շղթացած, որ նորան ամեն կերպով ցոյց էր տալիս իւր սէրը աւազակաց քարայրի մէջ: Ուստի և մանուկ կոմսը խնդրեց, որ միայն նորան ներել:

Կոմսը տեսնելով իւր որդւոյ աղաչանքը, ասաց.

—Այժմ այդ բանը վճռել անկարելի է, բայց մինչև վճիռը խոստանում եմ այդ երիտասարդի հետ քաղցրութեամբ վարուել:

Հարց ու փորձ անելուց յետոյ երևաց, որ Ռիչարդը չէր թափել երբէք ոչ մի մարդու արիւն, այլ նա ևս յափշտակուած լինելով իւր մօրից, եղել է նոցա ծառայ: Բոլոր աւազակներին վճռեցին, որ նոքա լինեն յաւիտեան բանտարկուած: Նոցա միջից միայն ազատ էր Ռիչարդը իւր բարեսրտութեան համար: Ռիչարդի վարքը բոլորովին ուղղելու համար, հրամայեց նորան բնակացնել մի առանձին սենեկում, ուր նա օրէ օր պիտի բոլորովին մաքրէր իւր խիղճը: Կոմսը չը թողեց նորան անտէր և անօգնական: Կոմսը տեսնելով Ռիչարդի ուղղուելը, կանչեց իւր մօտ, որ ուղարկէ իւր ծնողաց մօտ:

Գալով Ռիչարդը, Կոմսը բռնեց նորա ձեռքից և խրատելով նորան, ասաց.

—Իմ սիրելի, տեսնում ես բարեսրտութեան հետևանքը. նա երբէք առանց վարձատրութեան չէ կարող մնալ այնպէս, ինչպէս և չարագործութիւնը չէ կարող անպատիժ մնալ մինչև վերջը: Բայց քո այն բարեսրտութեան և հոգատարութեան համար, որ ունեցել ես դէպի իմ որդին, ինչպէս խնդրում է Հէնրիկոսը, ես վճռում քեզ ազատ լինել այսուհետև:

Ահա քեզ բաւական գումար ոսկի, ճանապարհ ընկիր փութապէս դէպի քո սեպհական մայրը, որ այժմ, դուցէ, շատ լալուց կուրացրած լինի իւր աչքերը... գնա բարեաւ և մխիթար եղիր նորա սրտին:

Միւս մնացեալ աւազակների դատակնիքը փոխուեցաւ. նոցա հրակէզ արին, որուն արդարև արժանի էին: Իսկ այն ահռելի, Աստուածանից չը վախեցող կախարդ կինը իւր կեանքի վերջին րոպէները անցուց սարսափելի բանտի մէջ, նորա մարմնով կերակրուեցան շները և չը հասաւ իւր յաւիտենական բնակարանին... նորա ոսկորները արժանի չ'եղան գերեզմանի սև հողին... Ա. յապէս է միշտ չարագործների դատակնիքը:

Գողացած ապրանքները վերադարձուցին այն պարոններին, որոնց պատկանում էին. իսկ մնացած թանկագին բաների գնով Կոմսը շինեց որբերի և տնանկների ժողովատուն:

Երկար ցաւ ու նեղութիւնները Մարգարիտային դարձրին մի խորհող և խելօք օրիորդ: Նա դարձեալ ոկսեց Կոմսուհւոյ մօտ ծառայել, ուխտելով իւր բոլոր կեանքումը անբաժան մնալ այս ընտանիքից:

Իսկ նոցա տանը բնակուող փոքրիկ այգեպանի վիճակը շատ թշուառ անցաւ: Նորան իւր ցնորամտութեան և անունկրքութեան համար Կոմսուհին Հէնրիկոսի կորչելու օրից արտաքսեց իւր տանից, և

անդորձութիւնից յուսահատուած, նա իւր մանուկ հասակում «մնա՛ բարեւ՛» ասաց աշխարհին:

Մանուկ հովուին, որ Հէնրիկոսը բերել էր իւր հետ, ընծայեցին շատ ոսկիներ և հարստութիւններ և մեծ պատուով ուղղեւորեցին իւր լեռնային բնակարանը:

Իսկ Ծերունի բարեսիրտ Մէյնրադին երբէք իւրեանցից բաժանել չ'էին կամենում ո՛չ Կոմը, ո՛չ Կոմուհին և ոչ Հենրիկոսը. սակայն նա յանձնառու չ'եղաւ այդ բանին, արտասուալից աչքերով ասելով.

—Ո՛չ. մարդկանց հասարակութեան շրջանում ինձ անկարելի է ապրել, ես պէտք առանձնանամ և մնացեալ կեանքիս սուղ րոպէները պիտի Աստուծուն նուիրեմ: Ես այստեղ ո՛չինչ բանով ձեզ չ'եմ կարող պիտանի լինել, իսկ այնտեղ իմ աղքատիկ խուղի մէջ ես միշտ կարող եմ օգնել այն հովիւներին, որոնց քամակից շատ անգամ ընկնում են աւազակները: Ես այս աշխարհի մէջ անցուցած կեանքս բաւական եմ համարում, այժմ ինձ հարկաւոր է պատրաստուել յաւիտենականութեան համար, հարկաւոր է ինձ ջանալ զիս երկնաքաղաքացի կացուցանելու համար:

Ծերունին հաստատ մնաց իւր ասածներին: Էյխէնիէյլսեան ամրոցում մի քանի օր կենակցելով

բաղդաւորութիւն գտած ընտանեաց հետ, պատրաստուեց ճանապարհ ընկնելու: Նրա աչքերը լցուեցին արտասուքով. նա բարձրացնելով իւր դողդոջուն ձեռքերը երկնքին, աղօթեց Ամենակալ Արարչին և ապա օրհնեց Կոմին, Կոմուհուոյն և մանուկ Հէնրիկոսին: Բոլորն էլ սկսեցին լալ: Ճշմարիտ որ բացուեց մի ողբալի տեսարան: Ծերունի Մէյնրադի հրաժարուելը անտանելի էր ամենի համար. մանաւանդ Հէնրիկոսը առանց ցամաքացնելու իւր աչքերի արտասուքը, չ'էր կամենում նորանից հեռու մնալ: Բոլորն էլ տխուր սրտով ուղղեկից եղան բարեսիրտ ճգնաւորին մինչև ամրոցի դռները, ուր Կոմի սիգաճեմ երիվարներով լծուած կառքը սպասում էր Հէնրիկոսի բարերար Ծերունուոյն: Մէյնրադը նստեց կառքը և մարդասիրաբար ժպիտ յարուցանելով իւր շրթունքների վերայ, ուղղեւորուելուց առաջ արտասանեց.

—Աստուծոյ օրհնութիւնը լինի անսպառ ձեր վերայ: Խաղաղութեան հրեշտակը անպակաս լինի ձեր ընտանեաց միջից և բաղդաւորութիւնը միշտ դրոշմուած լինի ձեր կեանքի վերայ:

Ապա դարձեալ իւր գիրին առնելով մանուկ Հէնրիկոսին, օրհնեց նորան և համբուրելով նորա ճակատը, հանեց իւր պարանոցից Աստուածամօր պատկերը, որ իւր մանկութեան օրօրոցից կախած

ունէր իւր կուրծքի վերայ, և կախելով Հիւրիկոսի պարանոցից, տուեց կոմս Ֆրիդրիկոսին:

Վերջին անգամ ևս կցկտուր ձայնով, ասաց.

—Մնացէք բարեաւ և խաղաղութեամբ...միւս կեանքում դարձեալ կը տեսնուենք...Տէր ընդ ձեզ...

Ամենքը նայում էին և կամաց-կամաց կառքը հեռանում էր ամրոցէն:

Հ. Գ. Ս.

ապրիլ

ՎԵՐՋ:

Шаратунян Ц. Ц.

Шарату

ԳԻՆՆԷ

Հատով առնողների համար 15 կոպէկ.

Գումարով առնողներին . 12 կոպէկ.

«Ազգային գրադարան»
NL0108798